

բայ Պետրոսեանի վարուց նոր կենսագրու-
թիւնը:

Երկասիրութիւնը որ նշանաւոր դեր մը
պիտի կատարէ Հայաստանի կաթողի-
կէութեան պատմութեան համար՝ ընծա-
յուած է Սրբազան Փահանայակոտին:

Ս. Հայրը՝ որ իր վիեննոկոյ Պատրիար-
քութեան օրէն կատարեց ծառային Աս-

տուծոյ Երանացուցման Դատին պատրաս-
տութեան նուիրուած նախնական Դատաս-
տանները, հաճեցաւ ընդունիլ որդիական
նուէրը և ուրախակցութիւն յայտնելով
Դատին Աղերսակու Հ. Մինասայ՝ երկա-
սիրած զործոյն համար՝ շնորհեց իր Ա-
ռաքեալական Օրհնութիւնը:

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՏԵԱՌՆ ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻ ՊԱՊԻՆ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ

ԹՈՒՂԹ ՀԱՆՐԱԿԱՆ ԱՌ ՄԻՍՈՆԱՐՍ ԿԱՐԳԵԱՍ ԸՆԴԻ ԱՐԵՒԵԼՍ

ՅԱՂԱԳՍ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒՍԻՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՅՈՒՆԱՅ ԵՒ ԱՅԼՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՅՅ



Հարիւր վաթսուէն տարի վերջ երբ վերստին կը հրատարակինք այս հոչաւ
կաւոր կոնդակը, իմն Թարգմանութեան ձեւովն ու լեզուով, դիտումսին է մի
միայն ցուցնել թէ ինչպէս Հռովմէական Ս. Եկեղեցին միշտ նախանձախնայոր
եղած է Արեւելեան Եկեղեցեաց ծէսերու եւ արարողութեանց հայրն պահպա-
նութիւնս. եւ եթէ երբեք ուզած է, կամ թողլ տուած է փոփոխութիւններ
մուծանել անոց մէջ, ըրած է զայն պարզապէս խափանելու համար մոլորու-
թիւն մը սպառնացող վտանգը, որ այլ ծէսերու սխալ մեկնութիւնէ մը կընար
ծագիլ:

Այսպիսի Թանկագին յիշատակարան մը վերստին յարուցանելու յարմար
առիթ կը ներկայացնէ մեզ այն պարագայն ալ, որ նորրոտի Սրբազան Քա-
նանայապետն իւր նուիրական պաշտաման Թեալոխած պահուն, այն պահուն
յորում իւր անսխալ հովուապետի առաջնորդող ձայնը պիտի լսեցնէ ի սփիւռս
աղեկերաց ցրուեալ հաւատացելոց հօսին, կը սեպմականէ իրեն Քիւնէրիկոս
հաղետասաներորդ անունն. անուն մը որ ինքնին ծրագիր մ'է ամենուն հա-
մար յուսովից եւ բերկրաւթիմ:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ՊԱՊ

Զ Ո Ր Ե Ք Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ

Սիրելի որդւոյդ ողջոյն, եւ առաքելական
օրհնութիւնս

Մատուցան ի ժողով յարգելի եղբարց
մերոց՝ կարդինարաց սրբոյ հովմէական
եկեղեցւոյ՝ ոստիկանաց իրողութեանց տա-
րածման հաւատոյ, թուղթը քահանայի

որումն՝ կարգելոյ ի վարել զսրբազան
առաքելութեան պաշտօնս ի Բարալ քա-
ղաքի, զոր ոսովորէն կոչեն Պապոյ որ
և հնգետասանօրեայ ճանապարհ հեռի է
ի Բարիլոնէ. և տուրեառիք վաճառա-
կանաց մեծահոչակ. որովք զբովք զգա-
ցոյց մեզ, թէ բազումք կան յայնմ քա-
ղաքի ուղղափառք արեւելեայ ծիսովք, այ-
սինքն Հայք կամ Ասորիք, որք չտեսնելով
զանպհական տաճար, զան յեկեղեցի լա-

տին միտոնարաց. ուր քահանայք նոցա՝ ըստ սեպհական ծիսից իւրեանց՝ պատարագս մատուցանեն, և զայլ սրբազան արարողութիւն կատարեն. իսկ աշխարհականք՝ այսպիսի պաշտամանց յանդիման լինին. և զխորհուրդս ի նոյն քահանայից ընդունին: Յայսմանէ առիթ էառ հարցանելոյ. թէ արդեօք վերոգրեալ հայք և ասորիք պարտիցին զուղղափառ ծէսս իւրիանց պահել, թէ վասն բառնալոյ զպէսպիսութիւն յեկեղեցւոյ անտի, յոր և լատինք՝ որպէս ասացաք, ժողովին, պատշաճագոյն ևս թուիցի՝ զի թողեալ հայոց և ասորւոց զհին տօմարն՝ զնորն ընդունիցին, ըստ այնց՝ որք վերաբերին ի սահմանել զժամանակս զատկական տօնախրմբութեան, և տարեկան հազորդութեան, որպէս և զքառասնորդացն, և զաւուրց տօնից՝ զշարժականաց և զանշարժականաց. և այլ ևս անցեալ յառաջ, հարցանէ. որպէս զի այսց ի Բասրայ եղեալ հայոց և ասորւոց զնոր տօմարն պահել սահմանեցի, արդեօք և այլոց արեւելեայց պարտիցէ սահմանադրել. որք ունին այո՝ ըզսեպհական տաճար, այլ այնչափ անձուկ, որ ի վայելչաբար կատարել զսրբազան պաշտամունս ոչ թուի պատշաճական. և վասն այնր յեկեղեցին լատինաց ժողովին յուղմակի:

Բ. Եւսև նոյն միտոնարն յաւել զրել առ նոյն ժողովն, թէ վասն զի արեւելեան ուղղափառաց հայոց և ասորւոց հրամայեալ է, յաւուրս նուիրեալս պահոց ժուկալել ի ձկանց, բազումք գտանին ի նոսա որք զայս ոչ պահեն. ոչ եթէ արհամարհանօք ինչ վարեալք, այլ կէս ի տկարութենէ բնութիան ձգեալք, և կէս յայնմանէ՝ զի տեսանեն թէ լատինացւոց ուղղափառաց այլ է սովորութիւն. վասն այնորիկ ոչ անպատշաճ թուի, թէ տացի միտոնարաց հրաման թոյլ տալոյ՝ ոչ ամենեցուն, այլ մասնաւորապէս սոցա կամ նոցա, զի կերիցեն ձուկն ի ժամանակս պահոց. սակայն այնպէս՝ զի ոչինչ գայթակղութիւն յայնմանէ ծագեցի. և զի այլինչ գործ բարեպաշտութեան փոխա-

նակ ժուկալելոյ ի ձկանց՝ հրամայեցի նոցա առնել:

Գ. Այս ամենայն, որպէս ասացաք, ի վերոգրեալ միտոնարէն առաջադրեցաւ ժողովոյն տարածման հաւատոյ. որ ըստ սովորութեան եթող ջննել զնոյն այլում ժողովոյ ընդհանրական ջննութեան: Եւ այս եղև առաջի մեր ի 18 մարտի, ի թուականին 1755. և միաբան հաւանութեամբ կարողինարաց ջննչաց՝ տուաւ պատասխանի. թէ ոչինչ և նորոգելի: Զնոյն և մեր հեղինակութեամբ մերով հաստատեցաք, շարժեալք մանաւանդ ի վճռոյն եղելոյ յայլում նուագի ի ժողովոյ անտի տարածման հաւատոյ, ի 31 յունվարի, յամին 1702. որ յայնմհետէ քաղում անգամ հաստատեցաւ և նորոգեցաւ. և է այսպիսի. զի զեկուցանել պատուական հօր՝ տեսառն կարողութիւն Օգոստինոսի փառնոյ քարտուղարի, սուրբ ժողովն պատուէր ետ հրամայել, որպէս հրամայէ իսկ վճռաւ՝ մի ըստ միովէ ամենայն վերակացուաց առաքելական միտոնարութեան, և միտոնարաց, զի մի՛ որ ի նոցանէ առ յայտայ՝ զինչ և իցէ պատճառանօք կամ պատուական իշխեսցէ տնօրինել ուղղափառաց որոյ և իցէ արեւելեան ազգի, ի վերայ պահոց՝ ազօթից՝ արարողութեանց՝ և նրմանեաց, որք ի սեպհական ծիսէ այնց ազանց սահմանեալք իցեն, և ի սուրբ յառաքելական աթոռոյ հաւանեալք: Եւ դարձեալ նոյն սուրբ ժողովն հաստատէ, թէ չէր և չէ օրէն այնց ուղղափառաց իօրք իւրի խոտորիլ ի սովորութենէ և ի պահպանութենէ իւրեանց ծիսի, ի սուրբ հոգովէական եկեղեցւոյ՝ ըստ վերոգրելոցդ՝ հաւանեցելոյ: Զայսպիսի վճիռ այսպէս հաստատեալ և նորոգեալ նոյն վսեմապատիւ հարք՝ ամենայն նախասացեալ վերակացուաց և միտոնարաց ամենայն իօրք, և առանց ինչ բաղբաղելոյ՝ պահել հրամայեցին: Որ վճիռ հայի յուղղափառան արեւելեան եկեղեցւոյ. և ի ծէսս նոցա յառաքելական աթոռոյ հաւանեալս: Արդ յայտ է ամենեցուն, թէ արեւելեան եկեղեցւոյ չորք են ծէսք. այսինքն, յունացն՝

հայոցն՝ ասորւոցն՝ և խփտեացն. և զայս ամենայն ծէսս ընդ միով անուամբ՝ յուռաց կամ արեւելեան եկեղեցւոյ իմանամք. որպէս և ընդ անուամբ հռովմէական լատին եկեղեցւոյ՝ իմանամք զծէսն հռովմէական, զամբրոսեան, զմովարաբեան, և ըզպէսպէս առանձնական ծէսս կարգաց կրօնաւորաց:

Դ. Անշնչափ բացայայտ է վնոյս ի մացուած, մինչ զի ոչինչ մեկնութեան կարօտի: Վասն որոյ մերս այս հանրական թուղթ զայս ինչ դիտէ, զի այսպիսի օրէնք ամենեցուն ծանուցեալ լիցին և յայտնի. և զի յայսմհետէ զգուշազոյն դիցիցին ի գործ: Բանգի յիրաւի է երկրային, թէ ինդիրքն ի բարաւայեան միտոնարէն ժողովարկելը, յառաջ գան յանգիտութենէ վնոց վաղ ուրեմն եղելոց: Բայց քանզի յայլոց բազմապատիկ նշանաց են թաղատեմք, թէ լատին միտոնարաց փոյթ և մտածութիւն յայն բերի, զի ի դարձուցանելն զարեւելեայս ի հերձուածոյ և ի մոլորութենէ ի միութիւն և ի սուրբ յուղղափառ կրօն, զարեւելեայ ծէսս ի միջոյ բառայցեն, կամ գոնէ աղաւաղեացեն, և զարեւելեան ուղղափառոս յանկուսցեն յընդունելութիւն լատինական ծիսի, ոչ այլինչ իրաց աղազաւ, բայց եթէ ջանիւ զկրօնն ընդարձակելոյ, և գործ բարի և աստուածաճանոյ գործելոյ. վասն այնորիկ (ձեռնամուխ լեալ ի գրել), իրաւունս համարեցաք մերովս այսուիկ հանրական թղթով, համառօտ ըստ կարի, բովանդակել զամենայն զոր ըստ մտաց այսր առաքելական աթոռոյ՝ պարտ է ունիլ որպէս զզաղափար, քանիցս անգամ դարձուցանին արեւելեայք յուղղափառ կրօն. զորս և պարտ է պահել ընդ արեւելեան ուղղափառոս՝ եղեալս ի տեղիս, ուր կամ ոչ գոն լատինք, և կամ լատին ուղղափառք խառն ընդ արեւելեան ուղղափառս բնակին:

Ե. Ապաքէն ի պատմութիւնս եկեղեցականս և ոչ ծագել ջրթանց, ըստ առաւելին, մերձեալ համարի, որ ոչն գիտիցէ՝ որչափ ինչ աշխատ եղեն քահանայապետք

Հռովմայ ի դարձուցանել զարեւելեայս ի միութիւն՝ յետ մահաբեր հերձուածոյն Փոտոսի, որ առ ժամանակօք մեծի քահանայապետին սրբոյն Նիկողայոսի առաջնեւորդի, բռնակալեաց զաթոռն կոստանդնուպոլսի՝ հալածեալ ըռնի զսուրբն իգնատիոս զօրինաւոր պատրիարքն: Սուրբն Ղեռն ինեւորդ նախորդ մեր հրեշտակաւ արձակեաց ի կոստանդնուպոլս, զի զայնպիսի հերձուած՝ զթմրեալն զրեթէ ընդ երկուս դարս, զոր Միքայէլ կերուար վերստին նորոգեաց՝ արմատաքի խլեսցէ. այլ ջանք նորս ընդունայն եղեն: Ապա Ուրբանոս երկրորդ զոյնս ի Բաբեան ժողով հրաւիրեաց. այլ դոյզն պտուղ եկիտ. թէպէտ և սուրբն Անսելմոս արհեստակարարս կանաւարիոյ զամենայն յոյժ յանձին կալաւ, զի հաշտեցուցէ զնոսս ընդ եկեղեցւոյն Հռովմայ. և գմուրբութիւնսն յորս կային՝ լուսով վարդապետութեան իւրոյ՝ յայտ արար նոցա: Ի Լոզդոնեան ժողովն՝ զոր զուարեաց երանելին Գրիգոր տառնեւորդ, Միքայէլ Պաղողզոս կայսր, և յոյն եպիսկոպոսունք միաբանեցան ընդ եկեղեցւոյն Հռովմայ. բայց ջրջնալ զմիտս՝ միւսաբեզամ սարտեան ի նմանէ իսկ ի ժողովն Փլորենտեան՝ առ Էլզինէոսի չորրորդաւ ծայրագոյն քահանայապետաւ, յոր եկեալն էին Յովհաննէս Պաղողզոս, և Յովսէփ պատրիարք կոստանդնուպոլսի, հանդերձ այլովք արեւելեան եպիսկոպոսօք, հաստատեցաւ միաբանութիւնն, և իւրաքանչիւրոց ստորագրութեամբ եղև ընկալեալ. և ի նոյն ժողովն եկեղեցիք Հայոց և Յակովբեանց՝ դարձան ի հնազանդութիւնս առաքելական աթոռոյն: Ապա երթեալ Էլզինէոսի քահանայապետի ի Փլորենտիոյ ի Հռովմ, զհրեշտակաւ ևս զարեային Եթէովպացւոց ընկալաւ, և զԱստրիս՝ զԲաղդէսցիս՝ և զՄարոնիս՝ ի հնազանդութիւն Հռովմայ գահին նուաճեաց: Բայց քանզի ըստ զրեցելումն յաւետարանի սրբոյն Մատթէի, (զլ. 13) սերմն անկեալ յապառաժի՝ ոչինչ պտուղ բերէ, առ ի չլոյս տեղաւ՝ ուր զարմատան արձակիցէ. «Սորա են որք խնդութեամբ ըն-

դուռին վաղվաղակի զբանն Աստուծոյ, բայց զի ոչ ունին արմատս յինքեանս, ի լինել նեղութեան և հալածանաց՝ վասն բանին, վաղվաղակի գայթակղին»։ Վասն այնորիկ այն ինչ Մարկոս արհեստագործ պոս Եփեսոսի իբրև զայլ ոմն փոփոխ՝ զմիաբանութիւնն ջրել լաւանցաւ, և ընդդէմ այնմ խրախուսել ձեռնարկեաց, անդէն վաղվաղակի ամենայն պտուղ բրձանաց կրեաւ։

Զ. Դարձեալ եկեղեցական պատմութեանց անհմուտ զանձն ցուցանէ, որ ոչն գիտցել, թէ այնպէս կատարեցաւ և հաստատեցաւ միաբանութիւնն ընդ արեւելեայս՝ զի զվարդապետութիւնն բղիման Հոգւոյն Սրբոյ ի Հօրէ և յՈրդւոյ դաւանեացին. որով և զյաւելումն բառիս՝ և յՈրդոյ, ի հանգանակն՝ օրինաւոր լինիլ ընդունեացին. և զի որպէս զխմորեալ հացն՝ նոյնպէս և զանխմորն՝ նիւթ լինիլ խորհրդոյ հաղորդութեան՝ խոստովանեացին. զի ըզվարդապետութիւն քաւարանին՝ զբրանական տեսութիւնն՝ և զգլխաւորութիւնն քահանայապետին Հոռովմայ՝ ընկալցին։ Եւ ի մի բան բովանդակեալ՝ ամենայն փոյթ ի մէջ մատուցաւ, զի մոլորութիւնը ուղղափառ հաւատոյ հակառակը ի միջոյ բարձրցին. այլ ոչ երբէք, զի յարգական ծիսի արեւելայց փնաս ինչ հասուցի։ Այլ և զայժմու ուսումն եկեղեցւոյ ամենեկին անգիտանայ, որ ո՛չ քաջածանօթ իցէ, թէ քահանայապետը Հոռովմայ, որը յողորմ պատահարս անցելոց ժամանակաց աներկեան գտեալը, վասն դարձի յունացն ի միաբանութիւն միշտ հոգացան, ի դոյն ճանապարհ՝ զոր փորը մի յառաջ ցուցաւ՝ միշտ կացին, և արդ իսկ կան, որպէս ի բանից նոցին և ի գործոց՝ յայտ յանդիման երևի։

Եւ Առ մետասաներորդ դարուն՝ ի կոստանդնուպօլիս, յԱղէքսանդրիայ, և ի վիճակ պատրիարքութեանն Երուսաղէմի՝ գտանէին եկեղեցիք ինչ լատինացւոց, յորս լատին ծէս պահելու. որպէս և ի Հոռովմ ո՛չ պակասէին տաճարք յունաց, յորս նորա յոյն ծիսովք զաստուածային պաշ-

տամունսն կատարէին։ Միքայէլ Կերուզար՝ ամբարիշտ նորոգիչ հերձուածոյն՝ զլատինացւոց եկեղեցիս հրամայեաց փակել։ Այլ սուրբն Ղևոն իննեորդը, քահանայապետն Հոռովմայ՝ ոչինչ վրիժուց վրէժ հատոյց. թէպէտ և դիւրին էր նմա զայն առնել. և ոչ զտաճարս յունացն ի Հոռովմ փակել. այլ կամեցաւ՝ զի կացցեն բաց։ Վասն որոյ ի գանգատել իւրում զգրկանաց՝ զոր առնէին լատինացւոց, (ի թուղթրն իւր առաջնեորդ. գլ. 9) ասէ. «Աւասիկ յայտոսիկ կողմանս եկեղեցին Հոռովմայ քանի՜ անխալութեամբ, մեղմութեամբ և մարդասիրութեանմբ գնայ ընդ ձեզ։ Զի բազում մենաստանք և եկեղեցիք գտանին յունաց ի Հոռովմ, ներքոյ և արտաքոյ, սակայն և ոչ զմի ի նոցանէ ցայսվայր խուցցաւ՝ կամ արգելաւ ի հայրենի աւանդութենէ, կամ յիւրմէ սովորութենէ. այլ մանաւանդ յորդորեմք, և խրատեմք զնոյն պահել»։

Ը. ի սկիզբն երեքտասաներորդ դարուն, յորժամ լատինք տիրեցին կոստանդնուպօլիս, և կամ եղև քահանայապետին մեծի ինովկենտիոսի երրորդի զլատին պատրիարք նստուցանել ի քաղաքի անդ, որում ոչ միայն լատինք՝ այլև յոյնք իցեն հնազանդը, ի վերայ այսր ամենայնի ո՛չ զանց արար յայտնի հրատարակել, թէ ոչինչ փնաս հատուցանել կամի յունական ծիսից. բայց թէ՛ գուցէ սովորութիւնք ինչ իցեն առ նոսա ընկալեալը, որը վտանգաւորը իցեն հոգւոց, կամ եկեղեցական համեստութեան հակառակ։ Պատճէն վճռոյ քահանայապետիս՝ արարեալ ի չորրորդ ժողովն լատերաւնեան, ի մէջ բերի, թէ՛ (ի հատորն Է. երրորդ. քաղուածոյ ժողովոց՝ զոր արարեալ է Արդունոյ, յէջն, 22) և թէ՛ (ի գլ. թէպէտ (ասէ) զյոյնս դարձեալս յաւուրս մեր ի հնազանդութիւն առաքելական գահին, խնամարկել և մեծարել կամիմք, զսովորութիւնս և զծէսս նոցա ըստ կարի տեւրամբ պատսպարեալ. սակայն ոչ կամիմք և ոչ պարտիմք տանիլ նոցա յայնս՝ որը

վտանգին զհոգիս, և զեկեղեցական համաստեղծինն արատեն»։ Յետ սորա Ուրուխու երրորդ՝ որ անընդմիջապէս յաջորդեաց ինովկենտիոսի՝ զնոյն ասաց, յորժամ զրեաց զիր առ թագաւորն կիպրոսի, որ ի քաղաքս ինչ թագաւորութեան իւրոյ՝ խնդրէր կրկին եպիսկոպոսունս, ըզմին լատին՝ վասն լատինացւոց եղելոց ի քաղաքսն յայնոսիկ, և զմիւսն յոյն՝ վասն յունաց ի նոյն տեղիս բնակելոց։ Եւ այս թուղթ Ուրուխու տպագրեալ գտանի ի տարեցիրս Հռենալդոսի, (ի վերայ ամին Քրիստոսի 1222 համար. 5)։

Թ. Այսմ ապացոյց բազում ունիմք յեւրեքտասաներորդ դարէն։ Զի յայս դար վերաբերի թուղթն ինովկենտիոսի չորրորդի առ Դանիէլ արքայ Ռուսաց, որ առ Հռենալդոսի, (ի վերայ ամին 1247. համար. 29) յորում զթագաւորին գմասնաւոր ջերմեռանդութիւնն առ կաթողիկէ եկեղեցի դրուատեալ, շնորհէ, զի ծէսք՝ որք ոչ հակառակին հաւատոյ հռովմէական եկեղեցւոյ, ի թագաւորութեան նորա պահեսցին. զրեալ առ նա զօրինակ զայս. «Սակս որոյ սիրելի որդեակ իմ ի Քրիստոս ի քո պաշտօնսդ խոնարհեալ, եպիսկոպոսաց և այլոց երեցացն Ռուսաստանի՝ հեղինակութեամբ նամակիս շնորհեմք, զի կարող իցեն ըստ սովորութեանց իւրեանց խմորուն հացիւ պատարագել, և զայլ ծէսս իւրեանց՝ որք ոչն հակառակին ուղղափառ հաւատոյ՝ զոր դաւանի եկեղեցին Հռովմայ՝ անվթար պահէլ»։ Յայս հայի և թուղթ նոյնոյ ինովկենտիոսի չորրորդի առ Ոթոն կարդինալ Տոսկոզեցի, նուիրակ սրբոյ Գահին ի կղզւոյն կիպրոսի, որում զործ յանձն արարեալ էր՝ խաղաղելոյ զհակառակութեան ինչ յարուցալս ի մէջ յունաց և լատինացւոց. որպէս երեւի ի սահմանադրութենէ նորա, որոյ սկիզբն է, ի ներքոյ ողղափառ. որ և (ի հին կոնդակագրի. հատ. Ա.) ընդ չորեքտասաներորդ թուով դասի (ասէ). «Սակայն վասն զի ոմանք ի յունաց յառաջ քան զաւուրս զայսոսիկ դարձեալք ի հպատակութիւն առաքելական գահին,

յարգանօք հնազանդին նմա, և անսանարժան է և օգուտ, զի սովորութեանց և ծիսից նոցա՝ տեքամբ ըստ կարի զիջեալ, զնոսա ի հնազանդութեան հռովմէական եկեղեցւոյ պահեսցուք։ Թէպէտ յայնս՝ որք վտանգ ինչ հոգւոց հասուցանեն, կամ զեկեղեցական համաստեղծինն արատեն, ո՛չ կամիմք և ո՛չ պարտիմք տանիլ նոցա բնաւ»։ Իսկ իբրեւ սահմանադրեաց ի թղթի անդ՝ զոր ինչ առնել էր յունաց, ապա և զայնս թուեալ զորս իրաւունս համարէր թողացուցանել նոցա, յայս բան զխօսան վնարեաց. «Արդ վերոյիշատակեալ արհեստիկոպոսին Նիկուսիոյ, և օժանդականաց նորա լատինաց՝ առ հասարակ իշխանութեամբ մերով պատուէր տացես, զի ըզյոյնսն զայնոսիկ ի վերայ նախագրելոցդ իրաց՝ ընդդէմ այսպիսի զգուշաւորութեան և ընտրողութեան մերոյ՝ մի՛ իւրից նեղեացեն կամ աշխատ արասցեն»։ Եւ նոյն քահանայապետն ինովկենտիոս չորրորդ զԼաւրենտիոս մինորիսն զապաշխարահայր իւր առաքելական նուիրակ կացուցեալ, և լիալիր իշխանութիւն տուեալ նմա ի վրայ ամենայն յունաց բնակելոց ի թագաւորութեանն կիպրոսի, և ի վիճակ պատրիարքութեանց Անտիոքայ և Երուսաղեմի, ևս և ի վերայ Յակոբեանց՝ Մարոնեանց՝ և Նեստորեանց, զայս ինչ առաւելապէս հրամայեաց նմա, զի զյոյնս զամենայն իշխանութեամբ իւրով պաշտպանեսցէ յամենայն նեղութեանց՝ զորս կարէին հասուցանել նոցա լատինք։ «Հրամայեմք (ասէ,) զի զյոյնս այնց կողմանց՝ յինչ անուն և անուանեսցին, առաքելական իշխանութեամբ պաշտպանեալ, մի՛ թողացուցես հրատաճարիլ նոցա բռնութեամբք, կամ զիարդ և իցէ նեղութեամբք. զամենայն զգրկանս և զվնասս հասուցեալս նոցա ի լատինացւոց՝ լիով յուղղութիւն ածեալ. և լատինացւոցն իստիւ պատուէր տացես, զի յայսպիսեաց աստի յայսմհետէ իսպառ կասեսցին»։ Այս բանքն ինովկենտիոսի առ վերոյասացեալ նուիրակն առաքելական զորս բերէ Հռենալդոս, (ի վերայ ամին Քրիստոսի. 1247 համար 30)։

Ժ. Աղէքսանդր չորրորդ, որ յաջորդեալն անմիջապէս ինովկենտիոսի քահանայապետի, իրեւ ետես՝ եթէ ի դերեւելին կամք նախորդին իւրոյ, և ծանեալ թէ դեռ զօրացեալ կան աղմուկը, և երկպառակութիւնը ի մէջ յոյն և լատին եպիսկոպոսաց ի թագաւորութեանն կիպրոսի, պատուէր ետ եպիսկոպոսացն լատինացւոց, զի զյունաց եկեղեցականս՝ ի սիւնհոգոսս իւրեանց կոչեցցեն. և զյոյսն ցուցեալ պարտաւորս ի հնազանդիլ սիւնհոգոսեան վճռոց, զայս պայման էած ի վերայ. «Ընդունիլ և պահել զսիւնհոգոսի սահմանսն, որը ոչն իցեն արգել յունական ծիսից, չհակառակելոց ուղղափառ հաւատոյ, և թողացուցելով ի Հոռովմական եկեղեցւոյ»։ Զայսը զովելի օրինակի զհետ երթեալ Եղիսա արհեպիսկոպոս Նիկոսիոյ՝ յամին 1340, ի սիւնհոգոսեան վճիռս իւր՝ յաւել ի վերայ զայս յայտարարութիւն. «Այլ այսուիկ ոչ դիտեմք արգելել յոյն եպիսկոպոսաց, և նոցին հպատակաց, զի մի՛ զծէսս իւրեանց՝ զչհակառակեալս ուղղափառ հաւատոյ՝ վարեցեն, ըստ կարգադրութեան ի բարեյիշատակ տեսնէ Աղէքսանդրէ՝ քահանայապետէն Հոռովմայ, ի թագաւորութեանն կիպրոսի ի մէջ յունաց և լատինացւոց արարելոյ, և պահեցելոյ»։ Զայս ամենայն է տեսանել ի քաղաւածոն Լարբեայ՝ տպագրեալս ի Վէնէտիկ։ (Հատ. 14. յէջն 279 և հատ. 15. յէջն 775)։

ԺԱ. Յաւարտ երեքտասաներորդ դարուն կատարի վերոյիշատակեալ միաբանութիւնն յունաց և լատինացւոց՝ սահմանեալ յընդհանրական ժողովն Լոզտոնեան, առ Երանելեալ Գրիգորի տասնեւորդաւ ծայրագոյն քահանայապետաւ, որ յղեացն առ Միքայէլ Պաղողոզոս զդաւանութիւնն հաւատոյ, և զվճիռն միաբանութեան զհաստատեալն ի ժողովոյն, և զընկալեալն երդմամբ ի հրեշտակացն արեւելեայց, զի և կայսրն՝ և այլ եպիսկոպոսունք յունաց զնոյն ստորագրեցցեն։ Արարին զամենայն կայսրն, և արեւելեայք, բայց զայս պայման ի վերայ յաւելեալ,

որ կայ ի նոցին իսկ գիրս. զորս ի մէջ բերէ Հարդուին ի քաղաւածս իւր. (Հատ. 8. յէջն 698)։ «Այլ աղաչեմք զմեծութիւն ձեր, և այլն, զի կացցուք մնասցուք ի ծէսս մեր, զոր վարեալք յառաջ քան զհրճուածս. սըն, որը չեն ինչ հակառակ նախասացեալ հաւատոյ, և ոչ ընդդէմ Աստուածային պատուիրանացն»։ Արդ թէպէտ պատասխանի քահանայապետին Գրիգորի առ այս սոսիկ թուղթս արեւելեայց՝ ոչ ուրեք եւրկի, բայց քանզի նա զմիաբանութիւնն ի նոցանէ ընկալեալ և ստորագրեալ, հաստատուն համարեցաւ, յայսմանէ յիրաւի է մակարեւել, թէ յանձն էառ նա զայս պայման, և հաւանեցաւ այնմ։ Ապաքէն Նիկողայոս երրորդ՝ յաջորդ Գրիգորի, ի ձեռն հրեշտակաց իւրոց՝ զորս յղեաց ի կոստանդնուպօլիս, այսոքիւք բանիւք զիւր միտսն յայտ արար, որպէս զրեալ կայ առ Հոննալդոսի, (ի վերայ ամին Գրիգորի 1278). (ասէ). «Իսկ զայլ յունական ծէսս՝ նոյն եկեղեցին Հոռովմայ՝ ըստ կարի Տերամբ, խնամողօրէն դիտէ՛ վարել յունաց. և թողացուցանէ նոցա կալ մնալ հաստատուն ի ծէսսն, յորս առաքելական աթոռոյն թուիցի, թէ ոչինչ փնասի նոցոք ամբողջութիւն ուղղափառ հաւատոյ, և ոչինչ արատին սրբազան սահմանը կանոնաց»։

ԺԲ. Յաղագս հնգետասաներորդ դարուն, շատ իցէ նախանառեալ միաբանութիւնն սահմանեալ ի ժողովն Փլորենտիոյ. որում Եւգինէոս քահանայապետ հաւանեալ, Թահանէս Պաղողոզոս ստորագրեաց՝ այսուիկ դաշամբք, «զի մի՛ ի ծիսից եկեղեցւոյ մերոյ փոփոխեցի ինչ»։ Որպէս երկի (ի հատ. 9) քաղաւածոց Հարդունոյ, (յէջն. 395)։ Այլ քանզի ոչ են մեզ կամք՝ մի ըստ միով է առաջի առնել զամենայն, որ ինչ ի քահանայապետաց Հոռովմայ յաջորդ դարս զործեցաւ, ինչ ինչ յերեւելեացն ի մէջ մատուցուք, յորոց յայտնի երեւցի, թէ նոցա ամենայն փոյթ և ջանք այն էին, զի զմուրրութիւնս սերմանեալս ի սիրտն արեւելեաց՝ ի նոցունց ի բաց խլեցցեն, միանգամայն և յայտ յանդիմա-

նուլթեամբը ցուցեալ, թէ կամին ողջ ա-
նարատ մնալ ծիսից, զորս նախնիք նոցա
յառաջ քան զհերժուածնսն առաքելական
աթոռոյն հաւանութեամբ՝ վարէին. և ոչ
երբէք պահանջէին յարեւելայց, զի թէ
ուղղափառ լինիլ կամիցին, զլատինացուց
ծէս զիւրեամբք արկանիցեն:

ԺԳ. Թննքըխտիոնի յունաց՝ տպագրելոյ
ի Բենեվենտ, երկու սահմանադրութիւնք
գտաւին ծայրագոյն քահանայապետացն
Ղևոնի տասնեորդի, և Կղենմայ եօթնե-
ւորդի, յորս մեծապէս կշտամբին այնք
լատինք, որք ստգտանեն ի յոյն զպահ-
պանութիւն այնց՝ որք թողացուցեալ են
նոցա ի Փլորենտեան ժողովն. մանաւանդ
զայն՝ զի խմորուն հացիւ մատուցանեն
զպաժարագ. և կին ածեն՝ յառաջ քան
զընդունելութիւն սուրբ աստիճանաց. և
զի յետ ընդունելոյ զսուրբ աստիճանս՝
պահեն զնա առ իւրեանս. և զի զհաղոր-
դութիւնն ընդ երկուորմբք տեսակօք՝ ևս
և մանկանց մատուցանեն Պիոս չորրորդ՝
ի սահմանադրութեան, Քահանայապետն
Հռովմայ, (որ է ընդ թուով, 75. հատ. 2.
նոյն Կոնզակագրի), ի վճռել իւրում,
զի յոյնք բնակեալք ի թեմս լատինաց-
ւոց՝ լատին եպիսկոպոսաց հպատակք իցեն,
զայս ինչ ի վերայ բերէ. «Սակայն այ-
սուիկ ոչ դիտեմք՝ զի յոյնք ի յունական
ծիսն իւրեանց քնցեացին, կամ այլազգ ինչ
զիարէ և իցէ՝ յառաջնորդաց տեղեաց կամ
յայլոց արգելցին»:

ԺԿ. Տարեգիրք Գրիգորի երեքտասա-
ներորդի, գրեալք ի հօրէն Մափեսոսէ, և
տպագրեալք ի Հռովմ, յամին 1742, բա-
զում ինչ պատմեն, զոր արար նոյն քա-
հանայապետն ի դարձուցանել զփոխիս՝
և զՀայս յուղղափառ հաւատս, թէպէտ
եւք իրացն ո՛չ յաջողցին, բայց առ բան
մեր առաւել նպաստեն այնք, որք ըն-
թեքցեալ լինին ի 63 երրորդ սահմանա-
դրութեան նորա, (ի նոր Կոնզակագրի.
հատ. 4. մասն. 3) և յայլ երկուս սահ-
մանադրութիւնս, այսինքն ի 157 երրորդն,
և ի 173 երրորդն. (ի նմին Կոնզակա-
գրի. հատ. 4. մասն. 4). յաղագս կա-

ռուցման երից դպրոցաց ի Հռովմ, կարգե-
ւոց ի նոյն քահանայապետէն վասն Բու-
նաց՝ Մարոնեաց և Հայոց. յորս զուսա-
նոգս այնց ազանց դաստիարակել հրա-
մայեաց. բայց այնպէս՝ զի միշտ յարեւ-
ելեան ծէսս իւրեանց կացցեն միասցեն:
Հոչակաւոր եղև յոյժ միաբանութիւնն
Ռուսաց ընդ առաքելական աթոռոյն, որ
եղև ի ժամանակս բարեյիշատակ պապին
Կղենմայ ութերորդի, որոյ յիշատակագրու-
թիւնք ընթերցեալ ըինին ի տարեգիրս՝
յարգոյ կարգինալին՝ Բարոնիոսի, տպա-
գրեալս ի Հռովմ, յամին 1596. (հատ. 7)
ուր (ի յէջն 681) ի մէջ բերի վճիռ ինչ
արարեալ յարհիպիսկոպոսաց և յեպիս-
կոպոսաց Ռուսաց, վասն առնելոյ զմիա-
բանութիւն՝ այսուիկ պայմանաւ. «Սա-
կայն ողջ և անարատ պահեսցին ծէսքն
և արարողութիւնք կատարելոյ զաստուա-
ծային պաշտամունս, և զսուրբ խոր-
հուրդս՝ ըստ սովորութեան արեւելեան ե-
կեղեցւոյն. ուղղեալ միայն զայն մասունս,
որք միաբանութեան լինին խափան. զի
ըստ սովորութեանն առաջնոյ լինիցի ա-
մենայն ինչ, որպէս կանխաւ, ի տեւել
միաբանութեանն լինէր»։ Այլ իբրև յետ
սակաւ միոյ շօնիդն հնչեաց՝ խաղաղու-
թեան խռովարար, թէք բարձան ի միա-
բանութեան՝ ծէսքն ամենայն, որովք վա-
րէին վաղնիւց ռուք՝ յաստուածային
սաղմոսերգութիւնս, ի մատուցմունս պա-
տարագաց, ի մատակարարութիւնս խոր-
հըրդոց, և յայլ սուրբ արարողութիւնս,
Պոզոս հինգերորդ առաքելական գրովք՝
տուեցելովք ի ձև նամակի, յամին 1615
որք տպագրեալ կան ի նոյն յենքըխտիոնի
յունաց, զկամս իւր այսոքիւք բանիւք
յայտնարարաւ ծանոց. (ասէ). «Միայն
թէ ճշմարտութեան և վարդապետութեան
ուղղափառ հաւատոյ ոչ իցեն հակառակ,
և ոչ բառնայցեն զհաղորդութիւնն ընդ
Հռովմական եկեղեցի, միաբանութեամբն
եղելով՝ դիտումն միտ և կամք եկեղեցւոյն
Հռովմայ՝ ո՛չ եղև և ոչ է բառնալ զայն
ծէսս՝ կամ շիջուցանել. և ոչ իսկ զայդ
ասել կամ խորհիլ մարթէր՝ կամ մարթ

է։ Այլ մանաւանդ զնոյնս վարել՝ ուս-
սացւոց եպիսկոպոսաց, և ուխտի նոցա,
յառաքելական զթոյ թոյլ տուեալ է, և
շնորհեալ՝ և ներեալ»։

ԺԵ. Կարի իսկ ի դէպ էր յայսմ վայրի
ի համար բերել զեկեղեցիս, զորս ընդ
ժամանակս ժամանակս՝ յետագայ քահա-
նայապետը Հոովմայ՝ ի Հոովմ քաղաքի
Նուիրեցին Յունաց՝ Մարոնեաց՝ Հայոց՝
Խփտեաց՝ և Մելքեանց, որք և ցարդ կան
և երևին. զի զսրբազան պաշտամունս իւ-
րեանց ըստ իւրաքանչիւր ծիսից՝ յայնս
կատարեսցեն։ Մարթ էր և զայն ևս ի
մէջ բերել, թէ որպէս Կղեմէս պապն ու-
թեորդ, ի սահմանադրութեան իւրում,
(34. յօդ. 7. հնոյ կոնդակագրի), կար-
գեաց ի Հոովմ զյոյն եպիսկոպոս, զի
զիտաւացի յոյնս՝ զընակեալս ի թեմս լա-
տինացւոց ձեռնադրեսցէ ըստ ծիսի յու-
նաց։ Եւ ապա ի Կղեմայ երկոտասանե-
րորդէ՝ ի մերձաւոր նախորդէ մերմէ, յիւ-
րում սահմանադրութեան, որոյ սկիզբն է,
հովնակսն, յաւելլաւ միւս ևս յոյն ե-
պիսկոպոս, որ հաստատուն աթոռ ունի
ի բխինիացւոց թեմի, ի ձեռնադրել զի-
տաւացի յոյնս. զի մի՛ որք բացագոյն են
ի Հոովմայ, հարկեսցին երկար ճանա-
պարհ հատանել՝ վասն ձեռնադրութիւն
ընդունելոյ ի յոյն եպիսկոպոսէ բնակե-
ցելոյ ի Հոովմ. ըստ սասցեալ սահմա-
նադրութեան Կղեմայ ութերորդի։ Եւ ոչ
իսկ ուղղափառ եպիսկոպոսացն Մարոնեաց՝
Խփտեաց՝ և Մելքեանց՝ որք գտանին եր-
բեմն ի Հոովմ, բացասի իշխանութիւն
ձեռնադրելոյ ըստ իւրեանց ծիսի՝ զմար-
դիկ ազգին իւրեանց, միայն թէ բաւա-
կանք գտանիցին առ այն։ Նոյնպէս յի-
րաւի էր յայսմ վայրի յաւելլուլ, թէ քա-
նիցս անգամ զվարդապետութենէ ինչ ա-
րեւելեայց կամ իտալացի յունաց յարու-
ցաւ հակաճառութիւն, աթոռն առաքելա-
կան ոչինչ զանց արար զնոցօք. զի թէ
կայցէ ինչ արժանի ուղղութեան, ուղղես-
ցէ. անդէն իսկ ցուցեալ թէ կամի՛ զի
յայլ ամենայն իրս՝ ծէսն արեւելեան ան-
խախտ և հաստատուն մնացէ, և կամ.

յայտնի բացատրեալ՝ թէ որ ինչ վասն իւ-
տալացի յունաց առ մեզ բնակելոց, և
ընդ իշխանութեամբ լատին եպիսկոպոսաց
հպատակելոց՝ լինի սահմանեալ, պարտ է
իմանալ՝ թէ զնոսին ևեթ պարտաւորէ-
ն ոչ բնաւ ձգի առ արեւելեայ յոյնս, որք
կարի իմն ի մէջ տարակացեալ կան ընդ
հպատակութեամբ յոյն եպիսկոպոսաց իւ-
րեանց ուղղափառաց։

ԺԶ. Յայտնի երևի այս ի հաստատու-
թենէ զաւառական սինհոդոսի ուսաց՝
գումարելոյ ի Զամոսկիա քաղաք, յամին
1720. յորոյ ի ցննութիւն և մեք իսկ՝
որք յայնժամ քարտուղարն էաք ժողովոյն
սինհոդոսի՝ կոչեցաք ի բարեյշխատակ
պապէն Բենեդիկտոսէ երեքտասաներորդէ,
որ թէպէտ պատշաճ համարեցաւ զիշանել
ի կամս հարց ժողովոյն, յորոց ծէսը ինչ
եղեալք առ յոյնս, վնասը նոցին կամ չա-
փաւորեալք էին, և կամ բարձեալք. և
զսինհոդոսն զայն հաստատեաց այո՛ իւ-
րովք առաքելական գրովք ի ձեռնակի
տուեցելովք՝ յամին 1724. բայց զայս
մեկնութիւն յաւելի վերայ. «Սակայն այն-
պէս զի մերովս այսր սինհոդոսի հաս-
տատութեամբ՝ մի՛ ինչ խափանուեմ լեալ
համարեսցի սահմանադրութեանց քահա-
նայապետացն Հոովմայ՝ նախորդաց մե-
նաց, և վնոց ընդհանրական ժողովոց՝
եղելոց ի վերայ ծիսից յունաց, որոց ան-
հակառակ գրով պս հաստատութիւն,
միշտ մնալոց են յուսի իւրեանց»։ Նոյնն
հաւաքի և ի բազմաց մերոց սահմանա-
դրութեանց, որք կանն ի կոնդակագրի
մերում, յաղազս ծիսից Խփտեաց՝ Մել-
քեանց՝ Մարոնեաց՝ Ռուսաց և իտալացի
Յունաց առհասարակ. և ևս մասնաւորա-
պէս յաղազս ծիսից ուխտի միաբանաւոր
եկեղեցւոյն մասնացւոց՝ անուանելոյ սըր-
բուհոյն Մարիամու (Կրափեայ), Եւ հուսկ
յետոյ յաղազս պահպանութեան յոյն ծիսի
ի կարգ սրբոյն Բափիլիոսի Քանզի ի 87.
սահմանադրութեան նոյնոյ կոնդակագրի,
(հատոր 1) յաղազս ծիսից մելքեան յու-
նաց՝ գրեալ կայ այսպէս. «Ապա յաղազս
ծիսից և սովորութեանց եկեղեցւոյ յունաց

նախ առաջին զայս ինչ ընդհանրապէս սահմանել հրամայեցաք, թէ չէ՛ր և չէ՛ ումեք օրէն ո և իցէ անուամբ և պաւորականաւ, և զինչ իշխանութիւն կամ պատիւ և ունիցի, թէպէտ և զպատրիարքական կամ զեպիսկոպոսական, նորոգել ինչ, կամ մուծանել զիմի, որ զամբողջ և զանվրէպ պահպանութիւն նոցին նուագեսցէ»։ Իսկ ի նախընթաց սահմանադրութեանն 57 երրորդի, որոյ սկիզբն է, Բեպիտ և հովաակիմ։ (յօդ. 9. համար 1). այս ինչ յազգա խտալացի յունաց սահմանադրի։ «Քանզի արեւելեան եկեղեցւոյ ծէսը, իբր մեծագոյն մասամբ ի սրբոց հարց յառաջ եկեալը՝ կամ ի նախնեաց աւանդեալը, այնպէս ի սիրտս յունաց և այլոց սերտեալ կան, մինչ զի նախորդը մեր քահանայապետը Հռովմայ լաւագոյն և խոհեմագոյն համարեցան, այսպիսի ծիսից՝ յորժամ ոչ ուղղափառ հաւատոյ հակառակին, և ոչ վտանգ հասուցանեն հոգւոց, և ոչ զեկեղեցական արտոնն ըզհամեատութիւն, հաւանիլ կամ թոյլ տալ, քան զնոսա ի ձե հռովմէական արարողութեանց դարձուցանել. և այլն»։ (Էւ ի յօդ. 9. համար 24) զրեալ կայ այսպէս. «Էւս և ամենայնիւ, զոր ինչ վերագոյն յոկիցէ մասին՝ իտալացի յունաց շնորհեցաք, ներեցաք, մեկնեցաք, հրամայեցաք, կարգեցաք, և խափանեցաք, կամ արգելաք. զյունաց որք բնակալ են յաբեկլա՝ ընդ իւրեանց ուղղափառ եպիսկոպոսը՝ արհապիսկոպոսը, կամ պատրիարքօք, և զայլոց ազանց քրիստոնէից՝ զինչ ծէսս և ունիցին՝ ի սուրբ Աթոռոյ հաւանեալս կամ թոյլ տուեալս, զո՞ և իցէ զիրաւունս, որ նոցա յիրաւանց կամ ի սովորութենէ՝ կամ այլուտ զիարդ և իցէ՝ օրինօք պատշաճիցի, կամ զառաքելական սահմանադրութիւնս, կամ զընդհանուր և մասնաւոր սինհոդոսաց, կամ զտողովոց յարգելի եղբարց մերոց՝ սրբոյ հռովմէական եկեղեցւոյ կարգի նարաց՝ զվճիռս եւ զեալս ի վերայ ծիսից յունաց կամ այլոց արեւելայց, ոչ իւրեք իւրօք դիտեմք վթաբել, կամ վնաս ինչ այնց հասուցանիլ»։

Ի՛նչ. Սակայն զսրբօք, և զայլովք բազմօք զանց արարեալ, համարձակ հաստատեցուց, թէ քահանայապետը Հռովմայ անդադար և անձանձրոյթ ջանացան, զի զհերետիկոսութիւնսն՝ յորոց ծագեաց հերձուած ի մէջ արեւմտեան և արեւելեան եկեղեցւոյ՝ բնաշինջս արասցեն. և վասն այսորիկ զբացադարձութիւն, և զերդմի հրաժեշտ ի մոլորութեանց անտի՝ պահանջեցին յայնց արեւելայց, որք ի միութիւն եկեղեցւոյ դառնալ ինդրեն, կամ զորոց քննելի է, թէ արդեօք ճշմարտութի իցեն ընդ առաքելական աթոռոյն։ Արդ երկու են ձեք դաւանութեան հաւատոյ. որոց զառաջինն կարգեաց վասն յունաց՝ ծայրագոյն քահանայապետն Գրիգոր Երեւոտասանբորդ, որ կայ (ի հատ. 2. հնոյ հռովմէական կոնդակագրի, ընդ Երեսներդ երրորդ թուով)։ Իսկ զերկրորդն վասն արեւելայց սահմանեաց Որբանոս ութերորդ, Երկրքին իսկ ապագրեալ եղեն ի տպարանի ժողովոյ տաւրածման հաւատոյ. առաջինն յամին 1623. իսկ երկրորդն յամին 1642։ Այլ յետ այսորիկ յամին 1665, իբրեւ յղեցին Անտիոքայ պատրիարքն ասորի յերապօլիս, այլ և արհապիսկոպոսն ասորւոց՝ բնակելոց ի նմին յերապօլիս քաղաքի, զդաւանութիւն հաւատոյ իւրեանց ի Հռովմ, և տուաւ այն ի քննութիւն հօրն Լաւրենտիոսի Լաւրեանց՝ ի կարգէ կրտսերաց վանականաց սրբոյն Ֆրանշիսկոսի, որ ընդ այն ժամանակս՝ իորհրդական էր սրբոյն պաշտամանն, և ապա կարդինար սրբոյ հռովմէական եկեղեցւոյ, սա ի 28 ապրիլի՝ այնր ամի, զհաւանութիւն իւր ընդ զրով արկեալ՝ մատոյց առաջի, որում անդէն իսկ և ժողովն հաւանեալ։ Էւ այս բանը էին ի նմա. «Ընդունելի է ամենայն, բայց յուշ առնել պարտ է նոցա, որոց հասանք, յայսմհետէ զհոգ տանիլ, զի այն դաւանութիւն հաւատոյ յղեսցի, զոր կանխաւ կարգեաց բարեյշխատակ պապն Որբանոս ութերորդ՝ վասն արեւելայց, զի կան ի նմա ի բազում հերետիկոսութեանց հրաժարութիւնը, և այլ

բազում ինչ վասն այնց կողմանց հարկաւոր»:

ԺԼ. Այլ քանզի թշնամին՝ զորոմն ի վերայ ցաննալ, ցայնվայր չարութեան զումանց սիրտս զրգոնաց, մինչև ի պատարագամատոյցս՝ ի մաշտոցս խառնել զմուրրութիւնս, զի նորքիմբ Եկեղեցականք և այլ ուխտ եկեղեցւոյն շաղախեացին. վասն այն պատշաճաւոր խորհրդով՝ և յետ ըզգուշաւոր քննութեան, քահանայապետք Հոովմայ ի տպարանի ժողովոյն տարածման հաւատոյ՝ զպատարագամատոյցս խփտեաց և Մարոնեաց, որպէս և զխորիկեցւոց՝ և զայլ այսպիսի պատարագամատոյցս՝ ետունն տպագրել, Եւ ոչ կարեմք լռել, որչափ փոյթ և աշխատութիւն լեալ իցէ ի սրբագրելն զմաշտոց յունաց, որ ի տպարանէ նոյնոյ ժողովոյն յանցեալ ամիսս աւարտեալ ի լոյս ածաւ: Այսր զորոնց քննութեան՝ բազում ջանիւ առ Որբանուսիւ ութերորդաւ եղև սկիզբն. բայց յետ ոչ բազում ժամանակի խափանեալ, հուսկ յետոյ առ Լիզմաւ երկոտասաներորդիւ, մերձաւոր նախորդաւ մերով՝ միւսանգամ ձեռն ի գործ արկաւ: Այլ բարերար և բարձրեալն Աստուած՝ այնչափ իւրց զմեզ խնդութեամբ, զի յետ անչափ տընութեանց՝ վաստակոյ և մանրակտիտ զննութեանց՝ եղիւրց առ քահանայապետութեամբ մերով ի կարդինարաց՝ յառաջնորդաց՝ յաստուածարանից, և ի քաջ լեզուագիտաց արեւելեայց, յորում ի մեզ իսկ ոչ խնայեցաք՝ հետազոտութեամբ՝ ստէպ ընթերցմամբ՝ և կշռութեամբ ամենայնի, զոր պարտն էր նկատել ընթեռնուլ և քննել, զայսպիսի գործ ծանր տեսաք աւարտեալ միշտ զգուշաւոր և իբր խզմահար իմն շրջահայեցութիւն ունելով, զի մի՛ փոքու իմն արատեսցի ծէսն յունական, այլ զի ողջ անարատ պահնացի ամենեկին, թէպէտ յանցեալ ժամանակս եղեն ի միջի մերում աստուածաբանք, որք ամենեկն սնտեղեակ գլով արեւելեան խորհրդատետրից, և ծիսից, զորս յառաջ քան զհերձուած՝ վարէին արեւելեան եկեղեցիք, անարգէին զամենայն որ ինչ ընդդիմանայր արևմտեան

եկեղեցւոյն ծիսի, որում միայն էին քաջածանօթ, Եւ զի ի մի բան բովանդակեցուք զամենայն, ի հոգալ զդարձ յունաց և հերձուածողաց արեւելեայց՝ յուղափառ լիցն, այսմ ևեթ քահանայապետք Հոովմայ բազում փոյթ ցուցին, զի ի սրտից նոցա արմատաքի խլեացեն զՈրիսի՝ զՄակեդոնի՝ զՆաստորի՝ զԵւտրեայ՝ զԻնսկորոսի՝ զմիակամաղաւանաց՝ և զայլոց զմուրրութիւնս, յորս ողորմ անկեալ կային. սակայն ողջ և անխախտ մնալով ծիսից և աւանդութեան, զոր յառաջ քան զհերձուածն պահէին և դաւանէին. որ և ի հին խորհրդատետրս և ի մաշտոցս նոցա արգոյս հաստատեալ կայ: Մանաւանդ թէ ո՛չ երբէք նոյն քահանայապետք Հոովմայ՝ պահանջեցին, զի ի դատնալ նոցա յուղափառ հաւատ, զիւրեանց ծէս թողցեն, և զլատինականաւ գիրկս արկցեն: Զի այդ ամենայն իրօք՝ զարեւելեան եկեղեցւոյ և զյունական և զարեւելայ ծիսից՝ ընդ իւր բերէ զկրօնստ. յոր ո՛չ միայն ոչ երբէք ձեռնարկեաց սուրբ զահն, այլ և յաւէտ եղև և է՛՝ կարի իմն օտար յայդպիսի խորհրդոյ: ԹԺ. Յայսմ ամենայնէ, զոր մինչև ցարդ զրեցաք յերկար, բազում ինչ դիւրաւ մակարերի: Եւ նախ՝ թէ զամենայն ջան և զփոյթ յայս ևեթ պարտ է ծախել միստնարին, որ զարեւելեան հերձուածողս և զոյնս՝ օգնականութեամբ տեսնն ի միւսութիւն դարձուցանել նկրտի, զի ի սրտից նոցա հանցէ զմուրրութիւնս՝ զուղափառ հաւատոյ հակառակեալս, զորովք գիրկս արկին հարց նոցա. զի ունիցին ինչ պատճառ՝ զատանելոյ ի միութենէ եկեղեցւոյն, և ի բաց կալոյ ի հնազանդութենէ և ի հպատակութենէ, զոր պարտն է ունիլ առ քահանայապետն Հոովմայ՝ իբրև առ գլուխ այնր եկեղեցւոյ: Իսկ որ ինչ է յաղագս ապացուցից՝ զորս պարտ է վարել միստնարին, (որովհետև արեւելեանք՝ հնոց հարց իւրեանց մեծապէս անսան), արդէն վճարեցան իրքն՝ ժրջան աշխատասիրութեամբ քաջափոյթ առն Ղևոնի Ալլատիոսի, և այլոց յորժորջակ աստուածաբանից, որք

յայտ յանդիման ապացուցին, թէ կարի իսկ միաբան են ընդ միմեանս հին և երևելի հարը յունաց, և մեր արևմտեան եկեղեցւոյ հարը, յայնմ ամենայնի, որ վերաբերի առ իմաստս հաւատոյ՝ և առ հերքումս մոլորութեանց, որովք ողորմ վարակեալ կան այժմու ժամանակի արեւելեայր և յոյնք։ Վասն որոյ այսց զրոց ընթերցումս օգուտ բազում՝ գործէ անտարակոյս։ Զանցան ապաքնէ լուսեօրեանք յանցեալ դարուն զարեւելեայս և զյոյնս յիւրեանց մոլորութիւնս ձգել։ Եւ ի նոյն ձեռն արկին կալվիտեանք զժպիհ թշնամիք՝ իրական ներկայութեանն՝ Քրիստոսի ի խորհուրդ հաղորդութեան, և գոյացափոխութեան հացին և զինւոյն ի մարմին և յարիւն նորին. և ի կողմն իւրեանց՝ որպէս ասեն, շրջեցին զպատրիարքն կիրեղ։ Սակայն յոյնք՝ թէպէտ և հերձուածողք, իբրև տեսն, թէ նորանոր մոլորութեանցն լուսեօրեանց ընդդէմ դառնան իւրեանց հնոց հարց հեղինակութիւնք, մանաւանդ՝ սրբոցն կիրեղի, Յովհաննու ոսկերչաւորի, Գրիգորի նիւսացւոյն և Յովհաննու դամասկացւոյն, ևս և վկայեալ ապացոյցք, որք ի խորհրդատեօրից նոցա հանին, ի հաստատութիւն իրական ներկայութեան և գոյացափոխութեան, ոչ թողին անձանց պատրիլ, և ոչ իւրք յուղափառ ճշմարտութենէ խոտորիլ կամեցան։ Այս ամենայն յայտ է ի Սքիզափորտայ ճառսն, Յաղագս յառեթմակն համախոնդաբան առ րեկեան և եկեղեցւոյ ընդդէմ լուսեօրեանքն. (Յէջն 717. հատ. 2. գործոց արեւելեան եկեղեցւոյ)։ Եւ նոյնք յերկուս սինհոդոսս զպատրիարքն կիրեղ, կամ զյանուն նորա արարեալ կալվիտեան աղանդս, միաբան դատապարտեցին. որպէս է տեսանել առ Քրիստիանու Լոպոսի. (մասն 5) ի վերայ ընդհանրական և գաւառական ժողովոց. և մանաւանդ ի ճառն, յաղագս տեղեաց ինչ. (զլ. 9 ի վերջն)։ Յորմէ նախ ոչ թիթեալ յայս է մեզ, իցէ թէ՛ իբրև առաջի դնիցին նոցա վկայութիւնք հնոց հարց, որք նորոց մոլորու-

թեանց նոցա հակառակին, և մերումս ուղղափառ վարդապետութեան կարի իմն նպատակն, դիւրին ճանապարհ դարձուց ղեացեն նոցա, և ի ճշմարիտ դարձուց միջեցեն։ Երկրորդ և այս ևս մակարերի, թէ առ ի դարձուցանել զարեւելեայս և զյոյնս՝ ի ճանապարհ միութեան, ոչ միայն չէ՛ պիտոյ խախտել զծէսս նոցա՝ կամ եղծանել, որովհետև միշտ օտար եղև այդ ի դիտմանէ առաքելական աթոռոյն, որ ի ողյն իսկ նիւթ սրբազան ծիսից՝ զորումն ի ցորենոյ, ըստ պիտեղոյն՝ գիտաց որոշել։ Այլ ևս այդպիսի ձկնորմութեան, բազմօք դիմադարձի ըղձալ միաբանութեան, որպէս ուղիղ զրէ թովմաս յիսուսեան։ (Յաղագս հոգատարութեան դարձի զնելի ամենայն ազանց. գիրք 7. զլ. 2). (ասէ)։ «Պարտ է և ցուցանել, թէ եկեղեցին հոռովական հաւանի և թոյլ տայ, զի իւրաքանչիւր եկեղեցի զիւրոց ծիսից և արարողութեանց զհետ երթիցէ. զի որովհետև կարի իմն պիտի կան հերձուածողք ի ծէսս իւրեանց, մի՛ գուցէ կարծիք ինչ կորուսանելոյ զայնս՝ ի նոսա անկեալ՝ օտարացուցէ և խոտորեցուցէ ըզնոսս ի հոռովական եկեղեցւոյ, պարտ է ըստ պարապոյ գուն գործել, զի համոզեցին՝ թէ քնալ ունին ի պահպանութիւնս արարողութեանց իւրեանց»։ Ի զբարաւ, յամենայնէ՛ գոր վերագոյնդ զրեցաւ, այն ինչ երրորդաբար մակարերի, թէ ամենինքն զգուշանալ պարտ է միսնաբին, որ զարեւելեան ոք հերձուածող դարձուցանել կամիցի, զի մի՛ ձկնորմութեան ձգել զնա ընդունելութիւն լատինական ծիսի. զի այս գործ և եթ յանձն է միսնաբին, դարձուցանել զարեւելեանն յուղափառ հաւատ. և ոչ թէ ի լատին ծէս զնա մուծանել։

Ի. Ընդ կատարել միաբանութեանն ի Փլորենական ժողով, զոր վերագոյն յիշատակեցաւ, ոմանք ի լատին ուղղափառաց՝ բնականաբար ի Յունաստան, օրինաւոր համարեցան անձանց՝ ի լատին ծիսէ ի յոյն ծէս անցանել, հրապուրեալք թերևս յազատութենէն, զոր տեսանէին պահեալ

յունաց, ունելոյ առ իւրեանս յետ սուրբ աստիճանի՝ զկանայս, զորս ածեալն էին յառաջ քան զընդունելութիւն սուրբ աստիճանին։ Այլ յիկողայոս հինգերորդ՝ քահանայապետն մեծ, ոչ հեղգացաւ այսմ անկարգութեան պատշաճ դեղ մատուցանել, որպէս հաւաքի ի սահմանադրութենէ նորա. (Հատ. 3. մասն 3. կոնդակագրին նորոգ տպելոյ ի Հոովմ. յէջն 64) (ասէ). «Եհաս յականջս մեր, թէ ի տեղիս՝ որք ընդ ձեռամբ ուղղափառաց են ի փոնաստան, բազում ուղղափառք միաբանութեան պատրուակաւ, յանդգնին անցանել ի յոյն ծէս։ Զարմացաք յոյժ, և ոչ զազարիմք ի զարմանալոյ, ոչ զիտելով՝ թէ զինչ իյցէ, որ զնոսա ի սովորութենէ և ի ծիսից՝ յորս ծնանն և սնան, յօտարազգի ծէսս փոխադրեաց։ Զի թէպէտ և գովելի են արևելեան եկեղեցւոյ ծէսք, սակայն չէ՝ օրէն զեկեղեցեաց ծէսս խառնակել. և ոչ այդմ թոյլ ետ երբէք սրբազան սինհոդոսն փլորենտեան»։ Եւ զի լատին ծէս այն է, զոր վարէ սուրբ եկեղեցին հոովմէական, որ մայրն է՝ և ուսուցիչ այլոց եկեղեցեաց, ապա պարտ է քան զայլ ամենայն ծէսս նախամեծար զսա համարիլ։ Յորմէ իսկ հետեի՝ թէ չէ օրէն ի լատին ծիսէ ի յոյն ծէս անցանել. և ոչ այնց՝ որք միանգամ ի յոյն կամ յարևելեան ծիսէ անցին ի լատինականն, պատեհ է դարձ առնել անդրէն յառաջին ծէսն յունական, որպէս յայտ է ի մերմէ սահմանադրութենէ, քեպետ և հովուական։ (57 յօդ. 2 համար. 13. կոնդակագրիս մերոյ հատոր 1). Բայց թէ զուցէ մասնաւոր ինչ պարագայք ի մէջ անկանիցին, որք համոզեցեն տնօրինել յայդմ. որպէս երբեմն յանցեալ ժամանակս, և արդ իսկ պատահէ ի դպրոց մարոնեաց՝ որ ի քաղաքի աստ մերում Գանգի քահանայ ոմն յընկերութենէն Յիսուսի, որ ի մտանել իւրում յընկերութիւնն, տնօրինումն ընկալաւ ի լատին ծէս անցանելոյ, յորժամ զտանի ի դպրոցի անդ, տնօրինի նմա երբեմն՝ յեկեղեցւոյ այնր դպրոցի՝ մատուցանել զպատարագ ի ծէս ասորի և

քաղդէական, և ըստ նոյն ծիսի զժամակարգութիւնն կատարել. յայտ է թէ՛ զի ուսանողաց այնր դպրոցի զբուն ծէսն ուսուցէ։ Նոյնն յայտնի երևի ի յոգունց վճռոց ժողովոյն սրբոյ պաշտաման, որոց մինն եղև ի 30 դեկտեմբերի յամին 1716 և միւսն ի 14 դեկտեմբերի յամին 1740 և յայլմէ ևս նորագոյն վճռոյ, զոր մեք ի 19 օգոստոսի, յամին 1752 հրամայեցաք առնել։

ԻԱ. Այս ամենայն յաղագս անցանելոյ ի լատին ծիսէ ի յոյն ծէս։ Այլ արդ կամեցեալ խօսիլ զանցանելոյ յարևելեան կամ ի յոյն ծիսէ ի լատին ծէս, համարձակ կարէ ասիլ, թէ այսպիսի անցումն ոչ այնպէս՝ որպէս՝ առաջինն, է՝ արգելեալ. բայց սակայն չէ բնաւ օրէն միսոնարին՝ որ զյոյնն կամ զարևելեանն ի միութիւն ուղղափառ եկեղեցւոյ դարձուցանել փափաքի, յորդորել, զի զիւր ծէսն թողցէ։ Վասն զի յայսմ ոռոյ վարելոյ ընդ նոսա, որպէս փոքր մի յառաջ նշանակեցաք, մեծամեծ փնասք կարեն յառաջանալ։ Մեղքեան ուղղափառք յառաջ մը տաղիւր ի յոյն ծիսէ ի լատին ծէս անցանէին. այլ արգելաւ նոցա այն. զգուշացուցեալ զմիսոնարս, զի մի՛ յորդորեսցեն զնոսա առ այսպիսի անցումն. որոյ թոյլ տուութիւնն առաքելական աթոռոյն դատման պահեալ է առանձինն, որպէս յայտ է ի մերմէ սահմանադրութենէ. Զյուն. ձեկարն (85. յօդ. 35 ի կոնդակագրի հատոր 1), (յոր ասի). «Դարձեալ ամենայն մեղքեանց ուղղափառաց՝ զյոյն ծէսս պահողաց՝ ի լատին ծէս անցանել, յայսմհետէ յայտնապէս արգելումք. և ամենայն միսոնարաց խստիւ պատուիրեմք՝ ընդ պատժօք ներքոյ զրելօք, և ընդ այլովք ըստ կամս մեր որոշելիօք, զի մի՛ զոր ի նոցանէ առ այսպիսի փոխումն ի յոյն ծիսէ ի լատին՝ յորդորել յանդգնեսցին, և ոչ իսկ խնդրողաց զայն, առանց հարցանելոյ առաքելական աթոռոյն, թոյլ տացեն»։ Միաբանին ընդ այսմ վճիռք Որբանոսի ութերորդի՝ նախորդին մերոյ՝ ի վերայ ծիսի յոյն ոռուսաց, արարեալք ի

ժողովի տարածման հաւատոյ՝ առաջի նո-
րա խմբիցելոյ, ի 7 փետրվարի և ի 7
յուլիսի յամին 1624: Էւ թէպէտ կարէր
պատշաճ թուիլ, զի իտալացի յունաց
համարձակ հրաման տացի՝ անցանելոյ,
եթէ կամիցին, ի յոյն ծիսէ ի լատին ծէս,
վասն լինելոյ նոցա ի միջի մերում, և
ընդ հպատակութեամբ լատին եպիսկոպո-
սի, սակայն սահմանադրեցաւ, զի առ այս
ամենայն իրօք պահանջեցի առաքելական
աթոռոյն հեղինակութիւն, եթէ բանն իցէ
զեկեղեցականաց, թէ աշխարհիկ իցեն, և
թէ կրօնաւոր, իսկ եթէ անաստիճանք և
աշխարհականք՝ խնդրիցեն զայսպիսի փո-
խումս ծիսի, բաւական իցէ եպիսկոպոսին
հրաման, զոր վասն արդար և օրինաւոր
պատճառաց՝ ոմանց անձանց չափաւորա-
պէս կարօղ իցէ տալ. բայց ոչ երբէք
բովանդակ հասարակութեանն: Զի առ այս
բոլոր առաքելական աթոռոյն հեղինակու-
թեան պէտք են: Որպէս է տեսանել ի
ստեղծ յիշատակեալ սահմանադրութեան
մերում. թեպէտ և ձոխախան. (17. յօդ.
2. համար 14. կոնդակագրիս մերոյ, հա-
տոր 1):


ԻՐ. Ապա թէ ոք ջատագովել կամիցի,
թէ զարեւելեայս և զլոյսն՝ զհրաժարեալս
ի հերետիկոսութեանց՝ և զգարձեալս ի
միութիւն՝ յիրաւի ի յորդորել և ստիպել,
զի զիրեանց ծէսս թողեալ՝ զլատինական
ծիսիւ ամենայնիւ գիրկս արեւանիցեն, իբր
զի յայլ անգամ հաւանեալ եղև, և արդ
իսկ հաւանեալ լինի. զի արեւելեայք և
յոյնք ի ծէսս ինչ՝ զլատինացւոց զհետ
երթիցեն, ի պատրաստի է առ այդ պա-
տասխանի: Զի արեւելեայք և յունաց են
իբրև թէ երկու դասք: Առաջինն է այնց՝
որք ոչ շատացեալ այնքիւք, որինչ յա-
ռաքելական աթոռոյ՝ առ պահպանութիւն
միութեան թոյլ տուեալ է նոցա, արտա-
քոյ բան զկոպար համեստութեան ժպրը-
հին ձգիլ, պանծացեալք՝ թէ ուր ինչ յին-
քեանց գործի՝ քաջ իսկ իրաւացի գործի.
և թէ խաբին լատինք, զի ոչ զնոյնս
գործեն: Որինակ առ քեզ զբաղարջն և
Յոյնք և արեւելեայք՝ որպէս զի իցեն ուղ-

ղափառք, պարտին խոստովանիլ, թէ այն-
պէս բաղարջն՝ որպէս խմորուն հացն՝ են
յարմար. նիւթ խորհրդոյ հաղորդութեան.
և թէ իւրաքանչիւրք զիրոյ եկեղեցւոյ
ծիսից պարտի զհետ երթալ, այնպէս՝ զի
որ ոք անարգէ զծէս լատինացւոց եկեղեց-
ւոյն՝ որ ի սրբացուցման հաղորդութեան
վարի բաղարջ հացիւ, խոտորի ի ճշմար-
տութենէ, և սահի ի մոլորութիւն: Իւր-
բիւն Մոնաքոս ի տրամախօսութիւնս իւր,
զոր Ղևոն Ալլաոտիոս ի յոյն բարբառոյ
դարձոյց ի լատին. (ի հատ. 1. ուղղա-
փառ յունաստանի). տպագրեալ ի տպա-
րանի ժողովոյ տարածման հաւատոյ, յա-
մին 1652 (յէջն 762), գրէ այսպէս. «Էւ
զայս գրեցի ձեզ, սիրելի յոյնք, ոչ հա-
ցիդ ձերոյ, որում երկրպագեալ՝ իբրև
զմերս բաղարջ վերապատուեմ, պարսա-
ւադիր լեալ. այլ ցուցեալ, թէ ոչ բար-
ւոք, և ոչ որպէս վայել է քրիստոնէի
առնէք. յորժամ զլատինացւոց բաղարջ՝
բանիւք և գործովք ընդ վայր հարկանէք
և թշնամանէք. զի յերկոսին իսկ, որպէս
ասացաք՝ կայ ճշմարիտ Քրիստոսս»: Կալ
օրինակ նոյնպէս զազատութիւնն, որ թո-
ղեալ է արեւելեան և յունաց եկեղեցւոյն.
զի որք յայնմ զսուրբ աստիճանս՝ ևս և
զքահանայութիւն ընդունին, զկանայս՝
զորս յառաջ քան զսուրբ աստիճանս ա-
ծեալ են, կարօղ իցեն պահել առ իւրեանս.
որպէս յայտ է ի կանոնէ, որոյ սկիզբն
է, Այլադգ. (զանա 31 և ի զլ. Քանզի
կանխաւ. յաղագս կղերիկոսաց ամուսնա-
ցիլոց): Քանզի քահանայապետք Հռովմայ
տեսեալ թէ ոչինչ հակառակի այն՝ աս-
տուածային կամ բնական իրաւանց, այլ
միայն եկեղեցական օրինադրութեանց,
պատշաճ վարկան այսմ սովորութեան
յաճախելոյ ի մէջ յունաց և արեւելեայց՝
տանիւ, զի մի՛ ի միջամուխ լինիլ առա-
քելական իշխանութեան ի բառնալ զայն,
սոսիթ տացի նոցա ի բաց կալոյ ի միու-
թենէ: Որպէս բարւոք գրէ Արկողիսա՝
(յիւր համածայնութեան գիրս 7. զլ. 33):
Էւ սակայն՝ (ո՛ արդեօք հաւատայր), ոչ
պակասեցան և ոչ պակասին ի յունաց

և յարեւելեայց, որք զրպարտեն զլատինացւոց եկեղեցի՝ որպէս զխափանիչ պրասակի, յայն սակա՝ զի օրինակի՝ առաքելոց զհետ երթեալ՝ ի կիսասարկաւազունս, ի սարկաւազունս՝ և յերկրունս իւր զանկին կեանս պահեաց և պահէ։ Տեսն ի գիրս ինկմարութի հոռեմեղոյ. (յերկրորդ հատ. գործոց իւրոց. Թուղթ. 51)։ Իսկ զերրորդ օրինակ առնումք յոմանց ի խփտեաց, ուրոց ծէսն սահմանադրէ, զի յետ խորհրդըդ մկրտութեան, նոյնհետայն տացի և դրոշմ, որ սովորութիւն ոչ է յարեւմտեան եկեղեցւոյ։ որ իւր ի բազումս՝ յընդունօցս դրոշմի պահանջէ զայնպիսի հասակ, զի կարօղ իցեն որոշել զբարի և զչար։ Եկեղեցին հոովմէական՝ հնոյ սովորութեան խփտեաց ոչ հակառակի։ Բայց (ո՛ւրդեօք հաւատայցէ), կան ի նոսա ոմանք, որք ի մկրտութենէ եղելոյ ի լատինացւոց՝ խորշին, յայն սակա՝ զի յետ մկրտութեան ոչ իսկ և իսկ և խորհուրդ դրոշմին մատակարարեցաւ։ Վասն այսորիկ ի սահմանադրութեան մերում, 129 երորդի, որոյ սկիզբն է, քեպտա ընդ այն ժամանակս, (կոնդակագրիս մերոյ հատոր 1)։ յիրաւի ի մէջ կշտամբին և դատապարտին, (յասեին)։ «Որպէս հեզութեան և երկայնմտութեան առաքելական աթոռոյն վայել թուի, մնալն խփտեաց՝ յիւրեանց վաղնջուց ընկալեալ՝ և ի նոյն աթոռոյ թողացուցեալ սովորութեանն, նոյնպէս անտանելի է նմա, զգուանօք և օտարամտութեամբ խորշիլն նոցա ի մկրտութենէ եղելոյ լատինական ծիսով, և ուրոյն ի դրոշմէ»։

ԻԳ. Զերկրորդ դաս կացուցանեն այնք արեւելեայց և յոյնք, որք պահեն մեծագոյն մասամբ զծէսս իւրեանց, և միանգամայն զարեւմտեայց և զլատինացւոց ծէսս ի յարգի ունելով, յոմանս յայնց հետեին, ի հին սովորութենէ յեպիսկոպոսաց իւրեանց նկատելոյ և հաւանեցելոյ, և յառաքելական աթոռոյ ևս՝ յայտնի կամ լեւելայն հաստատելոյ։ Յայս դաս վերաբերել մարթ է զհայս և զմարոնիս, որք զխմորուն լին, և զհաղորդութիւնն ի-

բրև զլատինա բաղարջիւ սրբացուցանեն. որպէս վկայէ Արքանամ Երեղացի՝ (յիւրում Եւտիքեան Զատագովութեան. յէջն 477)։ Զոր վարդապետութիւն հայոց՝ ումանք ընծայեն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, առաջնոյ հայրապետի Հայաստանեայց, որ ի սկիզբն չորրորդ դարուն, ընդ Տրդատաւ արքայիւ, վկայական պսակ ընկալաւ։ Իսկ այլք ի սրբոյն Սեդրեստոսն քահանայապետէ, կամ ի սրբոյն Գրիգորէ մեծէ սսեն զայն առեալ ի դաշնադրութիւնս արարեալս ընդ ազգին Հայոց, որք յիշատակին ի մեծ քահանայապետն Գրիգորէ իննբորդէ՝ ի Թուղթս իւր առ Թագաւորն Հայաստանեայց, որպէս բերէ Հոռնալոոս, (ի վերայ ամին Քրիստոսի 1139. համար 82)։ Եւ արդարեւ թէ այս վարդապետութիւն ի հոովմէական եկեղեցւոյ ի հայս աւանդեցաւ, վկայէ նոցին իսկ Հայոց՝ Սոսոյ կաթողիկոսն Գրիգոր՝ ի Թուղթն առ հայր Լէոնի արքային Հայոց՝ Հեթում, որ եղև վանական, (ըստ կղեմայ Կալանի, ի գիրս միաբանութեան եկեղեցւոյն Հայոց ընդ հոովմէականին. հատոր Ա. յէջն 449)։ զրեալ այսպէս. «Վասն այսորիկ մեք ի սուրբ հոովմէական եկեղեցւոյ զխառնումն ջրոյ ընդ զինւոյ ի բաժակին, արդ ընդունիմք որպէս ի նմանէ առեալ ունիմք զբաղարջն, զմիթն եպիսկոպոսական, և զկերպ խաչակնքելոյն»։ Նոյնպէս կարի իմն վաղնջուց և յանյիշատակ ժամանակէ հետէ է սովորութիւն բաղարջոյ՝ առ Մառոնիս, որպէս յայտ է ի Մովրինոսի (Յառաջարանութենէ, ի վերայ ձեռնադրութեանց Մարոնեաց, և ի դիւանագրէ աւելեայց, զոր արարեալ է Ասեմանի երիցու. (հատ. 1. յէջն 410)։ Այլ և յազգայինն սինհոդոսէ՝ խմբեցելոյ ի լերինն Լիբանանու, յամին 1736. որ հաստատեցաւ իսկ ի մէջ ի սահմանադրութեան մերում, (մասնաւոր 31 կոնդակագրիս մերոյ. հատ. Ա.)։ Յորոյ (ի զլ. 12. յազգա խորհրդոյ Հաղորդութեան), յորժամ քան լինի զբաղարջոյ՝ գրի այսպէս. «Որ սովորութիւն ի մերս եկեղեցի, և առ հայս



XI^a ESPOSIZIONE
INTERNAZIONALE
D'ARTE DELLA CITTÀ
DI VENEZIA - 1914 -
15 APRILE - 31 OTTOBRE

ևս յարեկելս՝ յանշիշատակ ժամանակէ հե-
տէ կայ. և այսմ վկայեալ ապացոյցս ևս
կարող եմք յառաջ բերել»։ Այսուիկ օրի-
նակաւ Հայոց՝ և Մարտնեաց, Բնասարիոն
արդիւնալ, որում նախ յանձն եղեալ էր
Բնաստան Երկաթակուռ քարանձաւին՝ որ
տոսկողեան թեմին, արար՝ զի յոյն
Դանձունք ի նմա բնակեալք, բաղարջիւ
արբացուցն, որպէս երեկ ի սահմանա-
դրութեան մերում, ՅՅ. երրորդի, (ի մէջ
թագմաց. յօդ. Այլ զի։ Կոնդակագրիս
մերոյ. հատ. 2)։ Նոյնն միշտ պահեցաւ,
և ցայսօր պահի ի միաբանաւոր եկեղեցւոյ
սրբուհւոյն Մարիամու (Գրափեայ) անուա-
նելոյ, որ ի մնասանեան թեմի. թէպէտ
ուխտ այնր եկեղեցւոյ գլուխաց ծէսն ունի.
որպէս երեկ ի սահմանադրութեան մե-
րում, 81 երրորդի. (որոյ սկիզբն է. Հոռվ-
մէական եկեղեցի. յօդ. 1. Կոնդակագրիս
մերոյ, հատ. Ա.)։ Թէպէտ՝ ընդհանրապէս
խօսելով, երիցունք իտալացի յոյն՝ պա-
հեն յիտալիա, և ի մերձաւոր կղզիս զիւ-
րեանց աւանդութիւն և զծէս, սրբացու-
ցանելոյ զհաղորդութիւնն իմորուն հացիւ.
և զգուշացուցանին սաստիկ քահանայք
յոյն և լատին ծիսի, զի մի՛ զանց ա-
րասցն իւրաքանչիւր ըստ իւրում ծիսի
զհաղորդութիւնն սրբացուցանել՝ և բաշ-
խել. որպէս բացատրի ի սահմանադրու-
թեան մերում, որոյ սկիզբն է. քեպետ
և հովտական. (57. յօդ. Ա. համար 2.
և յօդ. 6. համար 10 և յորս զկնի. Կոն-
դակագրիս մերոյ. հատ. 1)։

Իւր. Յոմանս զարս եկեղեցւոյ՝ այս սո-
վորութիւն եղև, զի յետ մկրտութեան
տալին մանկանց, զխորհուրդ հաղորդու-
թեան, ո՛չ յայն սակս՝ որպէս թէ հարկ
էր առ յաւիտենական փրկութիւն ման-
կանց, այլ սոսկ ի ծիսոյ, և ի սովորու-
թենէ եղելոյ ընդ այն ժամանակս, որպէս
իմաստնապէս ուսուցին հարք տրիդենտեան
ժողովոյն. (ի 21. գումարման զլ. 4)։
Յարեմտեան եկեղեցւոյ ի չորեքհարիւր և
աւելի ևս ամաց հետէ, ոչ տուեալ լինի
մանկանց հաղորդութիւն յետ մկրտութեան։
Ասկայն ոչ է մարթ ուրանալ, թէ ի մաշ-

տոցս արեւելեայ յիշատակի ծէսն տալոյ
զհաղորդութիւն մանկանց յետ մկրտու-
թեան։ Աստեման կրտսերն, (յերկրորդ զիրս
մատենի խորհրդատետրից, յէջն 149)
բերէ զկարգ կատարելոյ զմկրտութիւն՝ որ
առ մեղքեանս. և (յէջն 309) գրէ զկարգ
մկրտութեան ասորւոց, զարարեալն փի-
ղոցսնայ մարդեցւոյ միաբնակ եպիսկո-
պոսի. և (յէջն 306) բերէ միւս ևս կարգ,
հանեալ ի հին մաշտոցէ Սեբրոսի պա-
տրիարքին անտիոքայ, յառաջագիմի միա-
բնակաց։ Էւ (յերրորդ զիրս նոյնոյ մա-
տենի, յէջն 95. և յէջն 130) երկուս ևս
կարգս յիշատակէ, պահեալս ի մէջ Հա-
յոց՝ և Խփտեաց, ի կատարման մկրտու-
թեան. յամենայնի ի սոսա հրամայի, զի
մանկանց յետ մկրտութեան տացի հաղոր-
դութիւն։ Այս սովորութիւն առ յոյնս ու-
մանս՝ մինչև ի ժամանակս մեր պահի,
ասէ սուրբն Թովմաս. (3 մասն. խնդ. 80. պր. 9. առ երրորդն)։ Իսկ Արկա-
դիոս (յերրորդ զիրս, յաղագս խորհրդոյ
հաղորդութեան. զլ. 11), գրէ թէ այս
վարդապետութիւն է յունաց։ Այլ տմանք
ի նոցանէ առ սակաւ սակաւ զայն Թովին,
վասն անպատշաճութեանց, որք ի տալ
մանկանց զհաղորդութիւն յետ մկրտու-
թեան, դիպէին յոլովակի։ Ի գործս սին-
հոզոսի՝ եղելոյ այս Արքեալ պատրիարքաւ
Անտիոքայ մարոնեաց՝ ի լեռնն Լիբա-
նան, ի 18 սեպտեմբերի, յամին 1596.
որում նախագահ եղև հայրն Երոնիմոս
Դանքեան յրեկերութենէն Յիսուսի, նուի-
րակ մեծի քահանայապետին կղեմայ ու-
թերորդի. այս բանք ընթերցեալ լինին,
(ի կանոնն 7). «Փանգի դժուարին է՝ տը-
ղայոց առանց մեծի անվայելչութեան, և
սոսկալի խորհրդոյս արհամարհութեան,
զարգազան հաղորդութիւնն Գրիստոսի տալ,
զգոյշ լիցին յայսմհետէ ամենայն քահա-
նայք, զի մի՛ զոր. յառաջ քան զքանա-
վարութիւն, մերձեցուցն յայն»։ Միա-
բանին ընդ այսմ հարք ժողովոյն Զամու-
կեայ՝ խմբեցելոյ յամին 1720. (յօդ. 3.
յաղագս հաղորդութեան)։ Չնոյն հաստա-
տեալ՝ ընթեռնումք ի գործս լիւրամանեան

ժողովոյն, որ եղե յամին 1736 (զւ. 12 յաղագս ամենասուրբ խորհրդոյ հաղորդութեան. համար 13), որոյ բանքն են այսորիկ. «Թէպէտ ի հնագոյն մաշտոցս մեր, որպէս և ի հին կարգ հոգովմէական, և ի մաշտոցս յունաց՝ յայտնապէս հրամայի պաշտօնէի մկրտութեան զի վաղ-վաղակի յետ մկրտելոյ և մեռոնաւ օժեկոյ զտղայս, ջամբեսցեն նոցա զխորհուրդ հաղորդութեան, սակայն առ պատշաճաւոր յարգութիւն այսր հրաշափառ խորհրդոյս, և զի ոչ է այն տղայոց և մանկանց հարկաւոր առ ի փրկութիւն, հրամայեմք զի տղայոց ի մկրտիլ իւրեանց, մի՛ և մի՛ իւրեք՝ և ոչ ընդ տեսակաւ աւրեան տացի հաղորդութիւն»։ Եւ նոյն սահմանեցաւ ի սահմանադրութեան վասն իտալացի յունաց, որոյ սկիզբն է, քեպէտ և հովոսէական. (57 յօդ. 2. համար 7 կոնդակագրիս մերոյ. հատ. Ա.)։

Ի՞նչ Յաղագս սովորութեան մատակարարելոյ զհաղորդութիւնն ընդ երկրորումք տեսակօք՝ ևս և աշխարհականաց, ըստ մասին արեւելեայց և յունաց վարդապետութեան՝ ճոխագոյն գրեցին Արկադիոս (ի համաձայնութեան արեւմտեայց ի մատակարարութիւնս խորհրդոց, գիրք 3. զւ. 4)։ Եւ Ղևոն Ալլատիոս, (յառաջնում նշանագրութեան՝ յաղագս արեւմտեան և արեւելեան եկեղեցւոյ միաբանութեան յէջն 1614 և յորս զկնի)։ Ի զպրոցի յունաց՝ զոր ի Հոովմ՝ որպէս ասացաք, կանգնեաց Գրիգոր երեքտասաներորդ, օրինադրեալ՝ զի յոյն ծէս ի նմա պահեսցի, որպէս վկայէ նոյն Ղևոն Ալլատիոս, (ի ճառի իւրում, յաղագս հասակի և միջոցաց (աստիճանաց), յէջն 21) ըստ սահմանադրութեանց այնր զպրոցի, հաստատելոց ի քահանայապետէն մեծէ՝ ութերորդ Որբանոսէ, պարտին ուսանողքն յոթ աւուրս միանգամ զաղտս հոգւոյ լուանալ խորհրդով ապաշխարութեան. և զսուրբ հաղորդութիւնն ընդունիլ ի հնգետասան աւուրս միանգամ, այլ և ի հանդիսաւոր տօնս, և յամենայն կիրակէս գալստեան՝ և քառասներորդաց, ըստ լատին ծիսի. իսկ

ի տօնս հանդիսագոյնս, այսինքն ի զատկի, ի պենտէկոստէի, և ի ծննդեան Տեառն՝ հրամայի նոցա ընդունիլ զհաղորդութիւնն ընդ երկրորումք տեսակօք՝ ըստ յոյն ծիսի, այսինքն է՝ խմորուն, թացեալ յարեան, առ որոյ կատարումն վարի քահանայն փոքրիկ դրգալաւ, զոր մատուցանէ ի բերան ընդունողին զհաղորդութիւն։ Եւ նոյն ծէս պահի առ այլ ամենայն յոյնս՝ որք յասցեալ աւուրս ժողովին ի հանդիսաւոր պատարագ. կամ որք յայլ աւուրս տարւոյ յեկեղեցւոյ զպրոցի յունաց՝ ինդրին հաղորդիլ ըստ յոյն ծիսի։ Սակայն իտալացի յունաց ի սահմանադրութեան անդ, քեպէտ և հովոսէական (57. յօդ. 6. համար 15), թոյլ տուեալ լինի հաղորդիլ ընդ երկրորումք տեսակօք՝ յայն տեղիս միայն, յորս այսպէս հաղորդելոյ ծէս՝ պահեալ կայ. բայց ի տեղիս՝ ուր այն ծէս խափանեալ է, արգելանի հաղորդիլ ընդ երկրորումք տեսակօք։ Յայսմ վարդապետութեանն ընդ երկրորումք տեսակօք, թէպէտ և ընդ ամենայն արեւելեան եկեղեցի՝ է ընկալեալ, սակայն յոյնք և արեւելեայք ոմանք՝ փոքր փոքր ի բաց կացին։ Ղուկաս Հոլստենոս այլ մեծանուն՝ ի թուղթն առ Բերտուղոս Նիմֆսեան, որ տպեալ կայ ի յոյն և լատին մատենագրութիւնս Ղևոնի Ալլատիոսի, յէջն 436, պատմէ թէ հաղորդեցոյց ի վաղիկանեան հոյակապ տաճարի զէրէց ոմն խարչիկ, որ մատուցեալն էր ի սուրբ սեղան ընդ այլոց ի հաղորդիլ. և յետ հաղորդեցոյցանելոյ զնա ընդ մի միայն տեսակաւ հացի, ապա հարցեալ ցնա, և ցալ ևս մարդիկ եթէովպացւոյց եկեղեցւոյն, թէ ըստ իւրեանց հայրենի ծիսից՝ ունիցին արդեօք սովորութիւն ընդ մի միայն տեսակաւ հացի հաղորդիլ, եթէ՛ ի հանդիսական սպասաւորութեան, և եթէ՛ ի հանապազօրեայ ընդունելութեան հաղորդութեան, կամ յորժամ ի վերջին հիւանդութեան բերեալ լինէր առ նոսա ի թոշակ, վկայէ, թէ այսպիսի ետուն ինձ պատասխանի. «Սրբազան հաղորդութիւնն

ընդ մի միայն տեսակաւ հացի՝ մեզ միշտ մատակարարի, և զայս աւանդութիւն վաղընջուց ունի եթովպական եկեղեցիք»։ Ի խնդիրս առաջարկեալս ծայրագոյն քահանայապետին Գրիգորի երեքտասաներորդի՝ ի պատրիարզէ մարոնեաց, զտանի այս բան. «Ո՛րք մատուցանեմք զպատարագ լոկ բաղարջիւ, այլ աշխարհականք մեր ընդ երկոցումք տեսակօք հաղորդին»։ Որում քահանայապետն այսպէս ետ պատասխանի. «Եթէ կամին բաղարջիւ սըրբացուցանել, ոչ պատշաճ թուի արգելուլ, այլ աշխարհականք ի հաղորդութենէ ընդ երկաքանչիւր տեսակաւ փոքր փոքր զսպեցին. զի րովանդակ Քրիստոս կայ ընդ միով տեսակաւ. և զի ի վարել զսկիւն, մեծ Զտանգ գոյ հեղման»։ որպէս է տեսանել ի վերոյիշատակեալ գործ թողմայի Յիսուսեան. (Յաղագս դարձի ամենայն սաղմոս. յէջն 486. և յորս զգին)։ Այլ և հարց լիբանեան ժողովոյն՝ եղելոյ յամին 1736 (մասն 2. զլ. 12. համար 21), այսմ խրատու անսացեալ այսպէս սահմանեցին. «Ապա նորին սրբոյ հոգմէական եկեղեցւոյ օրինադրութեանց զհետ երթեալ, պատուիրեմք և խստիւ հրամայեմք, զի մի՛ ումեք աշխարհականի կամ կղերիկոսի ի փոքր աստիճանս եղելոյ՝ ընդ երկոցումք տեսակօք տացի հաղորդութիւն, այլ ընդ միով միայն տեսակաւ հացի»։ միայն սարկաւազաց թոյլ տուեալ՝ զի ի հանդիսաւոր պատարագի՝ զհաղորդութիւնն ընդ երկոցումք տեսակօք ի քահանայէն ընդունելցին. այս է՝ նախ ընդ տեսակաւ հացի, ապա ընդ տեսակաւ գինւոյ, սակայն առանց գործածութեան վերոյիշատակեալ զրգալի. «Յայց սարկաւազաց շնորհեմք և թոյլ տամք, զի զնշխար թացեալ յորեան ի քահանայից՝ մանաւանդ ի հանդիսաւոր պատարագին, կարող լցեն ընդունիլ. միայն թէ մի՛ իցէ զօրծածութիւն զրգալի, զոր ամենայն իրօք խափանել սահմանեմք»։

Ի՞ջ. Յետ այսր ամենայնի, ի խորհրդոյ հաղորդութեան ոչինչ կարի հեռացեալ, խօսեցուց արդ զայլմէ ծիսէ արեւելեայց

և յունաց, այսինքն է, որով քահանայն յետ սրբացուցման՝ և նախ քան զճաշակումն, սակաւ ինչ եղկ ջուր արկանէ ի բաժակն։ Մատթէոս Վլաստոր յայրուրեւնական սինդակմայս (զլ. Բ. հատ. 2. ի վերայ սինհոդոսաց յունաց, յէջն 153). զայս ծէս յիշատակէ, և զնորին նշանակութիւնն յառաջ բերէ. Եւթիմիոս Տիւրոսի և Սիդոնի արհայսկոպոս՝ յամին 1716, մեծի քահանայապետին՝ կղեմայ մետասաներորդի, խնդիրս ինչ առաջարկեաց. ուրոց մինն էր, արդեօք մեղքեանց Ասորեստանի՝ և Պաղեստինոյ, պարտ իցէ արգելուլ, զի մի՛ արկեցն զեղկ ջուր յաստուածային արիւնն՝ յետ սրբացուցման։ Որում տուաւ պատասխանի, յաւելեալ զզգուշաւոր և զքացայայտ հրահանգ՝ ի նոյն քահանայապետէն հաւանեալ, և նորին հրամանաւ յղեալ, առ զլիաւորս առաքելութեանց Երկրին սրբոյ, Կամասկոսի, Տիւրոսի և Սիդոնի. Եւ հրամայեցաւ արհայսկոպոսին, զի մի՛ արգելցէ զայն. որովհետեւ զհին ծիսէ է բանն, որ յառաքելական աթոռոյ է նկատեալ, և քահանայից յունաց՝ ևս ի Հոգմ թոյլ տուեալ. որով նշանակի եռանդն հաւատոյ, որում մեծապէս պարտ է վառել առ այս մեծահրաշ խորհուրդ. Սմին նման ի 31 մարտի յամին 1729, հրամանաւ Բենեդիկտոսի պապին երեքտասաներորդի տուաւ պատասխանի կիւրդի Անտիոքայ պատրիարքին յունաց, Նոյն ծէս և իտալացի յունաց թոյլ տուեալ լինի ի վերոյիշատակեալ սահմանադրութեան 57, իսկիւս և իսկուական, (յօդ. 6. համար 2. կոնստակագրիս մերոյ հատ. Ա.)։ Ապա յետ այսորիկ՝ իբրև ի ժողովս եղեալս վասն սրբազրութեան եկեղեցական գրոց արեւելան եկեղեցւոյ՝ զամենայն զգուշաւոր փոյթ ի մէջ առեալ՝ բազում է յերկար վիճաբանութիւնք լինէին, թէ արդեօք պարտ իցէ արգելուլ զծէսն՝ եղկ ջուր արկանելոյ ի բաժակն, յետ սրբացուցման, թէպէտ Հոմերդ կարդինալ լուսավայրեանց՝ յանցեալ ժամանակս բազումս բողոքեաց ընդդէմ այսմ ծիսի, սակայն տուաւ

պատասխանի ի 1 մայիսի յամին 1746 թէ ոչինչ է նորոգելի: Որ և գրեալ՝ ապա ի մէջ հաստատեցաւ Քանդակ տեսաւ, թէ ի պատճառսն՝ յառաջ բերեալս ի կարդինալէն՝ չկայր ինչ զօրութիւն: Բայց սակայն հարք ժողովոյն խմբեցելոյ ի Զաւոսկեայ քաղաք, յամին 1720, վասն ծանր ծանր պատճառաց՝ արգելին քահանայիցն ուսաց՝ չարկանել զեղկ ջուր ի բաժակն յետ սրբացուցման. որպէս գրեալ կայ, (ի յօդ. 4. յաղագս մատուցման պատարագաց). «Վասն ծանր պատճառի արգելու և խափանէ զթողացուցեալն յարեւելեան եկեղեցւոյ զսովորութիւն, արկանելոյ ի սրբացուցեալ տեսակս բաժակին եղկ ջուր, յետ սրբացուցման, յառաջ քան զճաշակումն»:

Ի՛նչ. Ահա ի սոսին, և յայլ աշպիսի օրինակս, զորս դիւրին էր շեղակուտել, ապաստանիլ կարեն, որք յօժարամիտքն են առ անցումն յարեւելեան՝ և ի յոյն ծիսէ, յարեւմտականն և ի լատինականն: Կամ որք կարծենն իրաւացի ինչ գործել, յորժամ ի դարձուցանել զարեւելեան հերձուածօղն ի միութիւն եկեղեցւոյ, ջանան քեցել զնոյն ի ծիսէ ինչ, զոր ուսեսալն էր պահել, մինչև միաբանեալ էր ընդ մեզ. որ և յայլ ամենայն արեւելայաց և յունաց՝ ըստ վարդմի աւանդութեանն պինդ կայեալ պահի: Սակայն ոչ վերոյգրեալ օրինակք, և ոչ այլք՝ զորս հնար էր ի մէջ բերել, նպաստեն ինչ նոցին կարծեաց. մի՛ զի ընդ անցանելն յարեւելեան և ի յոյն ծիսէ՝ յարեւմտեան և ի լատին ծէս, բառնի ամենեկին՝ որ ինչ ի յոյն ծիսէ անտի կարգեալ կայ, և որ ինչ ընդ մեր ծէսս ոչ միաբանի, որ ոչ հանդիպի յօրինակսն՝ զորս փոքր մի յառաջ բերաք. իբր զի նոցօք եթէ մասնաւոր իմն հանդիսաւորութիւն յոյն ծիսի բառնի, սակայն բուն ծէսն, և այլ ամենայն՝ որ ինչ ի ծիսէ անտի կարգեալ իցէ, անարատ պահի: Երկրորդ՝ զի և զմասն ինչ հատանեն ի ծիսէ իմեքէ պահմամբ այլոց մասանց այնր ծիսի, ոչ է մասնաւոր անծին, այլ հրապարակական հեղինակու-

թեան հարկ է ընդ մէջ մտանել. այսինքն է, գերագոյն գլխոյ ընդհանուր եկեղեցւոյ, որպիսի է քահանայապետն Հոովմայ. Քանգի առաքելական աթոռն է, որ նախապետական իմն իրաւամբք, քանիցս անգամ բանաւոր թուեցաւ նմա՝ յարեւելեան եկեղեցւոյ զծէսս ինչ էառ, և յարեւմտեան ծէս փոխանցեաց. կամ թոյլ ետ զծէսս ինչ յունաց՝ վարել յեկեղեցի ինչ լատինացուց: Եւ նոյն առաքելական աթոռ՝ քանիցս անգամ ետես զվտանգաւոր կամ զանպատեհ ինչ ծէսս յարեւելեան եկեղեցի սպրդեալ, զայն դատապարտեաց՝ մերժեաց և զգործածութիւն նորա արգել: Եւ վերջապէս՝ նոյն առաքելական աթոռն յորժամ ետես զարեւելայ կամ զյոյն ժողովուրդ ինչ ի գործածութեան կամ ի ջատագովութեան լատինական ինչ ծիսի կարի իմն հաստատեալ, մանաւանդ՝ յորժամ ծէսն ի վարդնուց ժամանակաց ի նոսա ձգեալ եղև, յամենեցունց առ հասարակ ընկալեալ, և յայտնի կամ լուեւայն յեպիսկոպոսաց հաւանեալ, զայն ծէս ներեալ նոցա, և աշպէս հաւանեալ հաստատեաց:

Ի՛նչ. Ի լատին և ի յոյն խորհրդաստեորս ինթերքեալ լինի հանգանակն. և զայս ասել ի մատուցման՝ պատարագի՝ սահմանեցաւ նախ յարեւելեան եկեղեցի. և ապա անցուցաւ յարեւմտեանն, որպէս հաւաքի յերրորդ ժողովոյն Թուլետոյ՝ եղև լոյ յամին 589. (ի կանոն 2. հատ. 5. քաղուածոց Լաբբայ. յէջն 1009). որոյ այս են բանք. «Զի ընդ ամենայն եկեղեցիս Սպանիոյ կամ Գաղղիկիոյ, ըստ օրինակի արեւելեան եկեղեցեաց, ժողովոյն կոստանդնուպօլսի, այսինքն հարիւր յիսուս հայրապետաց՝ հանգանակն հաւատոյ ասասցի. զի նախ քան զասելն զտէրունական աղօթս, լսելի ձայնիւ ի ժողովրդեանէն երգեսցի»: Արդ՝ վասն զի հարք ժողովոյն Թուլետոյ ի սահմանելն զվարդապետութիւնն ասելոյ զհանգանակն ի մատուցման պատարագի, ի ծէս արեւելեան եկեղեցեաց դիմեցին, այն բաւական է ի ճանաչել, թէ այս վարդապետութիւն նախ յարեւելս սահմանեալ՝ ապա յարեւմտս

տարածեցաւ. որպէս զբնն կարդինալ Բոնա, (ի վերայ խորհրդատետրի իրաց. գիրք 2. գլ. 8. համար 2), և Գեորգ (յաղագս խորհրդատետրի քահանայապետին Հռովմայ. հատ. Բ. գլ. 20. համար 2. էջ. 176): Այլ մեք մատիցուք այլ յառաջ, Ամադար (ի գիրս. յաղագս աստուածային պաշտամանց գլ. 14). յետ որոյ՝ յեցեալ ի վկայութիւն սրբոյն Պաւլինոսի ի Թուղթն (առ Սկերոս), պատմեաց՝ թէ միայն յուրբաթու աւագ շաբաթի սովորութիւնն էր յեկեղեցւոյ Երուսաղեմացոց՝ ցուցանել յերկրպագութիւն ժողովրդեան զխաչաւ փայտն՝ յոր բեւեռեցաւ Քրիստոս, այսմ յունական սովորութեան տայ զծէան երկրպագութեան սրբոյ խաչին. որ ի պաշտամունս աւագ ուրբաթու՝ յամենայն և ևեղեցիս լատինացոց մինչև ցայսօր կատարի: Երգն երեքսրբեան, «սուրբ Աստուած, սուրբ և հօր, սուրբ և անմահ, ողորմեաց մեզ», բարեպաշտական իմն է, և աղօթք յաճախեալ ի պաշտամունս յունաց. որպէս ուղիղ զբէ Գովարիոս ի նշանագրութիւնս առ մաշտոց նոցա ի վերայ պատարագի սրբոյն Յովնանու Ոսկերբուանին. (յէջն 109): Այսր աղօթից ծագումն՝ առեալ լինի ի սքանչելեաց, որ ի կէս հինգերորդ դարուն պատահեաց յարքայան յանիստ քաղաքին Կոստանդնուպոլսոյ. զի ի ժամանակի իբրեւ Թէոդոս կայսրն և պատրիարքն Պրոկոյ, և ամենայն ժողովուրդն հրապարակաւ աղերս մատուցանէին առ Աստուած, զի ապրեցային ի ըսպանապաղ կոտորածին, որ ի վերայ կայր նոցա յաննարին գետնաշարժութեանց, մանուկ մի յանկարծակի երևեցաւ յափըշտակիլ յերկինս, որ յետ սակաւ միոյ յերկիր վայրարեալ, պատմեաց՝ թէ լուեալ էր ի հրեշտակաց՝ զայն երեքսրբեանն երգել: Սակս որոյ իբրեւ հրամանաւ Պրոկոյի պատրիարքի՝ ժողովուրդն ամենայն ջերմօնաւ դնալով ի սրբեցին, դադարեաց երկիր յահագին շարժմանց, որովք սասանիւր. որպէս պատմէ Նիկեփորոս (գիրք 14. գլ. 46): և ուղիղ հաստատու մեծ քահանայապետն Փելիքս երրորդ ի Թուղթն

երրորդ՝ առ Պետրոս Թափիչ, որ գտանի (ի հատ. 4) քաղաածոց Լարսեայ: Արդ այս երեքսրբեան յարեմտեան եկեղեցւոյ յուրբաթու աւագ շաբաթի՝ երգի յունարէն և լատիներէն. որպէս իսկովեմամբ զբէ կարդինալ Բոնա, (ի վերայ խորհրդատետրի իրաց. գիրք 2. գլ. 10 համար 5): Օրհնութիւնն ջրոյ ի հսկման յայտնութեան՝ է ի բուն ծիսէ եկեղեցւոյն յունաց, որպէս բազմօր ցուցանէ Գովարիոս ի մաշտոցի յունաց. և արդ իսկ ի նմին աւուր ի Հռովմ յեկեղեցւոյ յունաց կատարի այս հանդէս. զորմէ ի վերոյիշատակեալ սահմանադրութեան մերում (57 յօդ. 5 համար 13) յիշատակութիւն լինի, և միանգամայն թոյլ տուեալ լինի, զի հաւատացեալք այնուիկ օրհնեալ ջրով ցօղեցային: Յաղագս անցանելոյ այսր ծիսի յարեւելիայց յարեմտեան եկեղեցիս ոմանս՝ մարթէ տեսանել՝ զոր ինչ հաւաքեաց Մարտեանէս գիտնաւոր, (ի հատոր Դ. յաղագս նախի լատինացեանց եկեղեցւոյ ի կատարմունս աստուածային պաշտամանց գլ. Դ. համար 2). և որ ինչ բերի ի ճառս հօրն Սկերստիսիսնոսի Պողոսեան՝ որ ի միաբանութենէ Տիրամօրն, տպագրեալս ի Նէպոլիս՝ յամին 1719 որոյ մակագիրն է. (յաղագս ծիսի եկեղեցւոյ Ներիտեանց՝ երգեցեցուցանելոյ զջուր ի յայտնութեան) ուր վասն այնորիկ յերրորդ մասին (յէջն 177 և յորս զկնի) պատշաճապէս յուշ առնէ եպիսկոպոսոսաց յորոց ի Թեմս ի բազում ժամանակաց հետէ ծէսը ինչ յեկեղեցւոյն յունաց յառաջեկեալ սարդեցին, զի զայնս մի՛ այնչափ ձկնաեցին բառնալ ի միջոյ. զի մի՛ ալմուկը լինեցին: և զի մի՛ երեւցային մերժել զկերպ վարիւոյ առաքելական գահին, որ թէպէտ և քաջ գիտէր՝ զայնց ծիսից ի ներքս սպրդիլ, սակայն թոյլ էտ պահել զայնս, և հանապազօրոյն ի նոյնս. և յառաջ բերէ ևս, (յէջն 203) զԹուղթ կարդինարին Սանկտորի՝ անուանելոյ սրբուհւոյն Սկերինեայ, զգրեալն յամին 1580 առ Փորնար եպիսկոպոս Ներիթեանց՝ յաղագս այսր ցուցոյ, և յաղագս օրհնութեան ջրոյն ի

յայտնութեան, որ յայնմ թեմի կատարի: Նոյնպէս յունաց՝ ծէս է՝ մերկել և լուսնալ զսեղանն ի հինգշաբաթի ընթերեսց տեառն: Զայսր ծիսի գլխշատակ ինչ է գտանել ի հինգերորդ դարուն, զի զայսմանէ յիշատակէ յիւրում զաղափարագրի, կամ ի կարգաւորութեան կատարելոյ զեկեղեցական ժամերգութիւնս ընդ ամի ողջոյն, սուրբն Սարայ, որ ըստ վկայելոյ Դևոնի Ալլատիոսի, (յաղագս գրոց եկեղեցւոյն յունաց ճառ. Ա. էջ 9) վախճանեցաւ յամին 451: Եթէ ստուգիւ հաստատել հնար էր, թէ կարգաւորութիւնն հոռոմէական ի Հիստորիայայ արարեալ, սրբոյն Գելասիոսի քահանայապետին հրամանաւ՝ յօրինեալ իցէ, ծէսն լուսնալոյ զսեղանս ի հինգշաբաթի ընթերեսց տեառն, նախասացեալ՝ սովորութեան յունաց՝ լիւնէր գրեթէ ժամանակակից՝ ի լատին եկեղեցւոյ. որովհետեւ սուրբն Գելասիոս քահանայապետ փոխեցաւ յամին 496: Բայց քանզի անստոյգ է, թէ կարգաւորութիւնն հոռոմէական ի Հիստորիայայ հանդիսացուցեալ՝ այնչափ վաղնջականութեան արդեամբք առաւելեալ իցէ. և զի, մեկուսեալ զայն, սուրբն Խաղորոս եպիսկոպոս Հիսպաղիոյ ի մէջ լատինացւոց եղև առաջինն, որ խօսեցաւ զայսմանէ ծիսէ. և նոյնն՝ (յամին 636) փոխեցաւ իշխարհէ շատ իցէ այն զի հաստատի թէ յարեւելից յարեմուտս փոխանցեալ է ծէսս այս, որ մինչև ցայսօր յեկեղեցիս ինչ լատինացւոց պահի, հաւանութեամբ քահանայապետացն Հոռոմայ. և մանաւանդ ի վատիկանեան հոյակապ տաճարի հանդիսութեամբ բազմաւ՝ ի հինգշաբաթի ընթերեսց Տեառն ամ յամէ կատարի: Սուրբէս եպիսկոպոս Վասիլոֆեցի, աթոռակալ նոյնոյ հոյակապ տաճարի, և Յովհան Քրիստոստոմ Բատտեղոս՝ արհեպիսկոպոս Ամասիոյ, որ ընդ կրտսեր թոշակաւորս այսր տաճարի էր կարգեալ, բազմաջան տընութեամբ երկուս ճառս գրեցին, որովք զայս ծէս յայտնի գործեցին: Եւ զի այս այսպէս է, օրինակօք և գործովք յայտ յանդիման ցուցանի՝ զոր փոքր մի յառաջ ասացաք,

այսինքն, թէ աթոռն առաքելական ոչ զանց արար՝ քանիցս անգամ բանաւոր թուեցաւ նմա, կամ առնուլ յընդհանուր եկեղեցին լատինական զծէսս ինչ, որք յունաց եկեղեցւոյն էին, կամ թոյլ տալ, զի մասնաւոր ծէսք ինչ որք յեկեղեցւոյն յունաց բղխեցին, ի լատին եկեղեցիս ումանս պահեսցին:

Ի՞նչ. Ապաքէն փոքր մի յառաջ խօսեցաք վասն երեքսրբենին, և վասն սքանչելի օրինակին, որով այս երգ մուծաւ ի սրբազան պաշտամունս եկեղեցւոյն յունաց: Բայց իբրև իշխեսց Պետրոս թափիչն մականուամբ Կնափեցի, ջատագով հերձուածոյն ապօղինարականաց՝ որք աստուածաշարչարքն անուանին, յաւելուլ յերեքսրբեանն զայս բան, որ խաչկտր վասն մեր, որպէս բազմօք յիշատակէ թէոգորոս վերձանօղ (գիրք Ա. քաղուածոց), և իբրև ընկալան ոմանք յեկեղեցեաց արեւելեայց, և մանաւանդ ասորիք և հայք, ի ձեռն Յակոբայ ուրումն ասորւոյ գյարադրութիւն զայնպիսի՝ ըստ վկայելոյն Նիկեփորոսի, (գիրք 18. զլ. 52) ոչ հեղգացան քահանայապետք Հոռոմայ, ըստ անքուն խնամոց և հոգատարութեան, զոր յայսպիսի իրս սովոր էին ունիլ, մուլորութեանն ճարակելոյ ընդդէմ զառնալ, և գյարադրութիւնն արարեալ՝ յերեքսրբեանն՝ արգելուլ. մերժեալ զմեկնութիւն այնց, որք վերաբերեալ զերեքսրբեանն միայն յանձն ուղւոյ՝ և ոչ յերիս անձինս աստուածայինս, զամենայն կասկած մուլորութեան բառնալ պարծէին: Մի՛ զի միշտ մնայր վտանգն զհետ երթալոյ հերետիկոսական աղանդոյն: Եւ երկրորդ՝ զի մարդկային մտաց վստահութիւն ոչ կարէր միայն ի Քրիստոս վերաբերել զերգն՝ ի հրեշտակաց ի պատիւ ամենասուրբ Երրորդութեան նուագեալ. որպէս ուղիղ զրէ Լորոս, (ի ծանուցմունս առ 81 երրորդ կանոնն Տրուղեան). ուր յետ ցուցանելոյ՝ թէ յարադրութիւնն արարեալ՝ յերեքսրբեանն դատապարտեալ է ի Փելիքսէ երրորդէ, և ի հոռոմէական սինհոդոսէ, յարէ. «Զերգն՝ միայն ամենասուրբ

Երրորդութեան միշտ ի սրբոց հրեշտակաց նուագեալ, առ Սլատուծոյ և հրեշտակաց անտի սրբոց՝ մանկամբն յիշատակելով՝ եկեղեցւոյ աւանդեալ. նահանջմամբ չաւրեացն ի վերայ հասելոց արքայական քաղաքին՝ հաստատեալ. և նովին մտօք՝ և օրինակաւ ի բովանդակ քաղկեդոնեան սինհոդոսէ հաւանեալ, հաստատութեամբ պնդեն, (խօսի, թէ՛ զեպիսկոպոսաց յայն ժողով խմբեցելոց, և թէ զայլոց՝ զյարադրութիւնն արարեալ յերեքսրբեանն՝ մերժողաց) թէ չէր մարթ մարդկային վրստահութեամբ միայն ի Գրիստոսի վերայ շրջել: Սուրբն Գրիգոր եօթներորդ, նովին կրօնասիրութեամբ զյարադրութիւնն զայն մերժեաց ի թուղթն իւր առաջին (գիրք 8), գրեալ առ արեւելիսկոպոսն կամ կաթողիկոսն Հայոց, Զնոյն արար Գրիգոր երեքտասներորդ, ի թուղթն ինչ իւր՝ գրեալս ի ձև նամակի առ պատրիարքն Մարոնեաց ի 14 փետրվարի յամին 1577: Իսկ ի ժողովն տարածման հաւատոյ, որ խմբեցաւ ի 30 յունվարի յամին 1635, իբրև ճշնութիւն եղև խորհրդատետրի Հայոց, և ի մէջ ալլոց զգուշագոյն զնոութեամբ կշռեցաւ, թէ արդեօք յարադրութեանն յաւելելոյ յերեքսրբեանն՝ կարելի՞ իցէ տանի, վասն վերոյիշատակեալ պատճառին, իբր զի երկի թէ՛, զայն առ անձն Որդւոյ միայն՝ հնար է վերաբերել. տուաւ պատասխանի, թէ չէ պարտ թոյլ տալ այդմ. և զյարադրութիւնն ամենեկն պարտ է աքտորել: Դպրագոյն քահանայապետն Գելասիոս իններորդ ի թղթի իւրում առ եպիսկոպոսս Լուկանիոյ, (գլ. 26) մերժեաց զիբր սովորութիւն ինչ մուծեալ ի նոսա. որով կանայք ի պատարագել քահանայի՝ սպասաւորէին. և իբրև նոյն անկարգ սովորութիւն էանց ի յոյնս, Եւնովկենտիոս չորրորդ ի թուղթն, զոր յղեաց առ եպիսկոպոսն Տոսկողայ, զնոյն սաստիւ տարագրեաց: «Սլլ կանայք, ասէ, մի՛ իշխեցցեն սպասաւորել առ սեղանոյ. այլ ի սպասաւորութենէ նորա ամենեկն մերժեցցին»: Նովին բանիւք և ի մէջ արգելանի, ի մերում ստէպ յիշատակեալ

սահմանադրութեան (քեպետ և հովուական. յօդ. 6. համար 21. հատ. Ա. կոնդակագրիս մերոյ): Ի հինգշաբաթի աւագ շաբաթուն ի յիշատակութիւն տէրունեան ընթերեաց՝ մատուցանի պատարագ, յորում սրբացուցանի հաց, որ ընդ ամն ողջոյն պահի, զի յայնմանէ հաղորդեցցին արտացեալն մահաբեր հիւանդութեամբ, որը զսուր հաղորդութիւն խնդրին իւրեանց ի թռակ. և երբեմն ի վերայ նոյն սրբացուցեալ հացի՝ և դոյզն ինչ մասն սրբացուցեալ զինւոյ հեղանի: Այս ծէս զրի ի Ղևոնէ Ալլատիոսէ ի ճառս իւր, (յաղագս հաղորդութեան արեւելեայց ընդ մի միայն տեսակաւ. համար 7) ծայրագոյն քահանայապետն Էնովկենտիոս չորրորդ ի թղթի անդ առ եպիսկոպոսն Տոսկողայ՝ զայն ծէս արգել յունաց բանիւքս այսոքիւք. «Զսրբութիւնն յօր ընթերեաց Տեառն սրբացուցեալ, մի՛ պահեսցեն ցկատարիլ տարւոյն, պատճառանօք հիւանդաց, իբր զի յայնմանէ զնոսա հաղորդեցցեն». և յաւելու, զի միշտ զպատրաստական հաղորդութիւն ունիցին վասն հիւանդաց. բայց զայն ի հնգետասան աւուրս միանգամ նորոգեցցեն: (Արկաղիոս ի ճառն յաղագս միարանութեան արևմտեան և արեւելեան եկեղեցւոյ. գիրք 3. գլ. 55 և 56) զանտեղութիւնս՝ որը՝ ի ծիսէ անտի յառաջ զային, ոչ զանց արար ցուցանել, աղաչելով զքահանայապետսն Հոովմայ, զի զայն իսպառ խափանեցեն: Արար զայն կղեմէս ութերորդ, ի հրահանգս իւր. Զնոյն և մեք արարաց ի մերում սահմանադրութեան (քեպետ և հովուական 57 յօդ. 6. համար 3. և յորս զկնի): Ի ժողովն Զաստակայ, որ քննեցան յերկուց ժողովոց, այսինքն սինհոդոսի, և տարածման հաւատոյ, (յօդ. 3. յաղագս հաղորդութեան) ընթերցեալ լինի այս սահման. զի թէ ուրեք դեռ կայցէ ծէսն սրբացուցանելոյ զհաղորդութիւն ի հինգշաբաթի ընթերեաց Տեառն, յայնմհետէ՝ արկանել ի նա զկաթիլ ինչ արեան, և պահել վասն հիւանդաց ընդ ամն ողջոյն, ամենեկն ի բաց թողցի. այլ ժողովրդապետք զհաղորդու-

թիւն վասն հիւանդաց պահեստներն, նորոգեալ զայն յով շաւուրս՝ կամ ի հնգեւ տասան աւուրս միանգամ, Զնոյն սահմանեցին հարց լիբանանեան ժողովոյն, ի մէջ հաստատելոյ. որպէս յայտ է (ի զլ. 12 յաղագս խորհրդոյ հաղորդութեան. համար 24). Որովհետ օրինակօր յայտնի ցուցանի, թէ աթոռն առաքելական ոչ երբէք զանց արար՝ արգելուլ յունաց ըզծէսս ինչ, թէպէտ ե վաղնջուց հաստատեալս առ նոսա, յորժամ տեսանէր, թէ փնասակար ե յոռի էին, կամ լինիլ կարէին:

(Շարայարեկի)

ՎԵՐՁԻՆ ԽՕՍԲ ՍԸ

Դրանթ եւ անհաճոյ խնդրոյն վրայ Գերթերգիպաշեան Գերթ վերստին կը դառնայ կաթողիկէ Արժագանգի թ. 163 Միպտ. 5 Պրակին մէջ, ուր այլեւ թողուլ խնդրոյն գիտական երեւոյթը (որու մասին նոր րոսելիք մը չունենալը կը յայտնէ), կը պնդէ զարձեալ Միթարեան Միարանութեան դէմ խորժանաց վրայ, պախարակելով թէ՛ անոր գործունէութիւնը մանկանց դաստիարակութեան մէջ եւ թէ՛ մանաւանդ հաստոց անկեղծութիւնն եւ ամբողջութիւնը ընդ աշխարհի յարաբերութեանց մէջ:

Գիտէ Մեծ. Գերապայծառը (եւ այս անգամ չի սխալիր) որ ի յարգանս մեր երկրաւորեան հաստատուն սկզբունքին՝ չպատասխանելու այն ամէն բանի որ գիտական ասպարէզին դուրս է, լուծեամբ պիտի անտեսենք իւր զրգուրութիւնները:

Առանց այս սկզբունքին, առանց համատեղութեան զգացմանց, Գերթ պիտի գտնէր հոս իւր թիւադրութեանց արժանաւոր պատասխանը:

Պիտի տեսնէր որ այսօրուան Միթարեաններ տարբեր չեն հիններէն, քանի որ այն հինները, որ այսօր կը գոլուին Գեր

րապայծառէն յանարգութիւն նորերուս, մի ե նոյն հակառակութիւններն ու մի ե նոյն հակառակութիւններն ունեցած են իրենց ժամանակ, ե զժաղաղաբար միշտ մի ե նոյն պատրուակաւ ե մի ե նոյն հակառակորդաց բանակէ:

Աւելի քան երկու հարիւր տարուան պատմութիւն մը, առանց ընդհատութեան, կու տայ մեզ ասոր ասպարէսները:

Գիտէ ինքն Մեծ. Գերապայծառը որ չկայ բնաւ ընկերութիւն մը որ չունենայ իւր թերացող անդամները, ինչպէս չկայ նաեւ անհատ մը՝ որքան ալ մեծ ե առաքինի, որ չունենայ իւր զէթ մանր թերութիւնները. սակայն ինչպէս անիրաւ է այսպիսի մանր թերութեանց համար, անտեսել անհատի մը վեհագոյն յատկութիւնը ու արժանիքը, այսպէս ալ անիրաւ է Միարանութիւն մը անուանարկել եթէ երբէք մի քանի անդամք թերացած զտնուին:

Միթթ. Միարանութիւնն իւր երկրորդեան գործունէութեան մէջ միակ կանոն ունեցած է ճշմարտութիւնն ե ուղղութիւնը, ե չէ տատամսած յառաջադիմելու, առանց աջ կամ ահեակ շեղելու, ոչ հակառակութեանց նետերէ ե ոչ գովասանաց ծափերէ:

Գերթ մեր հաւատաց անկեղծութեան ե ամբողջութեան մասին իւր քաղցրատաւ տարակոյսները կ'ուզէ փնտռել այցելութեանց մէջ որոնք տեղի ունեցած են մերթ ընդ մերթ: Այս տարակոյսները Զնջելու համար ստիպուած ենք յիշեցնելու իրեն որ զրպարտութիւնը որոնք այցելութեանց ե քննութեանց պատճառ եղած են, ոչ թէ արատ մը բերած են Միթարեան առումն, այլ ընդ հակառակն ամէն անգամ նոր փայլ նոր պերճութիւն տուած են իւր անմեղութեան ե ճիշտացուած են իւր արդեանց պատկը: Կը յիշեցնենք զարձեալ որ մենք չենք առաջին անգամ այս զրպարտութեանց զոհուող. աւելի քան երկու դարուց մէջ ոչ մէկ Միթարեան խնայուած է անկէ, ե նոյն ինքն մեր բռնաշնորհ հայրը Մեծ Միթարեան Արքայ առաջինն եղած է եթարկուելու քննու-